

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 19


ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏԱԿՈԶ»

№ 19

Կ. Ա. ԳՈՐԲԱՉԵՎ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՓՏԱԽՏԸ
ՅՐԱ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵԼ



ԹԻՖԼԻՍ 1924

619

7-81

8 AUG 2010

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ՅՈՒՆԻ ՅԵՐԿՐԵՄԻ, ՄԻԱՅՆ

Կ. Ա. ԳՈՐԲԱՉԵՎ

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՓՏԱԽԸ

ՅԵՎ

ՆՐԱ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Այ. 1.

ապ. 0

Թարգմանեց

Ա. Պ. Յ. Մ. Խ. Բ. Ա. Պ. Յ. Ն.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏԱԿՈԶ»
ԹԻՖԼԻՍ № 19 1924

21 MAR 2013

ԱՌԱՋԱԲԱՆ

Առաջարան յերկրորդ հրատարակության: Զորս տարի առաջ պ. Դյուման հրատարակեց իմ—«Փատախան» ու նրա բժշկությունը շրջանակավոր ու անշրջանակ փեթակների մեջ»—զրբույկը: Մեղվապահների շրջանում այդ գիրքը սիրալիք ընդունելություն գտավ, իսկ մեղվապահական գրականության մեջ արժանացավ հեղինակի համար պատվարեր քննադատությունների: Նրա առաջին հրատարակությունը սպառվեց: Գրական հրատարակում կան և ուրիշ հեղինակների աշխատություններ նույն նյութի վերաբերմամբ, սակայն նրանց մեծամասնությունն արդեն հստակ է:

Պետք է ասել, վոր ձիչտ ժամանակին սպառուեց իմ զրքի առաջին հրատարակությունը: Վերջին չորս տարվա ընթացքում փատախտին և նրա բժշկությանը վերաբերյալ թե ահսական և թե գործնական հարցներում այնքան նոր բաներ են կատարված, վոր անհրաժեշտ եր վերամշակել նրա յերկրորդ հրատարակությունը: Ի միջի այլոց, զրքույկին կցված և մի բոլորովին նոր զլուխ—Փատախի մանրագիտական հետազոտությունը և մանրագիտական սղրեպարատների պատրաստության յեղանակները: Ինձ թվում է, վոր այս համելվածը ամելորդ չի լինի թե հրահանգիչների և թե այն մեղվապահների համար, վորոնք կը ցանկանային ծանոթանալ մանրագիտական հետազոտությունների հանրամատչելի ձեռքի հետ:

Մասսսնի աշխատությունները Գերմանիայում և Ուայտինը (White)—Ամերիկայում նոր լույս սփռեցին փատախտի վըրա—մի չարիք, վոր ամենորյա նոզածության առարկա և վոչ միայն ոռու, այլ և ոտարազգի մեղվապահների համար, առանձնապես Ամերիկայում, ուր փատախտի և նրա գեմ մաքանելու միջոցների հարցը նույնքան հրատապ և հարկադրական է, վորքան և Ռուսաստանի շատ շրջաններում ու զինավորապես այն տեղերում, ուր մեղվապահությունը կազմում է զյուղատնտեսության լուրջ և խստ շահավետ ճյուղերից մեկը:

Այս գիրքը սպառուեց
Խուսած. Խոմիմեթիս. Խուսակցության Անդրկումի. Յեւկրային
Խոմիտեյի պատվերով



18319-58

Վերջին տարիներում ոռուելու լեզվով լույս տեսան յերկու խոշոր աշխատություններ՝ նվիրված փոտախտի հետազոտությանը, նրանցից մեկը պրիվատ-դոցենտ Ի. Լ. Սերբինովի աշխատությունն է՝ հրատարակված Ռուսական Մեղվագահական ընկերության միջոցով, մյուսը — Ա. Ա. Կորուելինը, վոր զետեղված և կենդանիների և բույսերի կլիմայավարժական ընկերության մանրաբանական — գյուղատնտեսական կայանի հրատարակությունների մեջ և արտատպված «Պчելովոճայ ամսագրի 1911 թվի համարներում:

Այս յերկու աշխատությունն ել խոկապիս փոտախտի մոնոպրաֆյական փորձեր են և գլխավորապիս վերաբերում են այդ հարցի գիտական՝ տեսական և մանրաբանական հետազոտությանը: Այս ձեռնարկի նպատակն այլ և — ծանոթացնել մեղվապահներին վոչ միայն փոտախտին վերաբերյալ հարցի այժմյան գրության հետ, այլ և ցույց տալ գործնական յեղանակներ մեղուների հիվանդությունների գեմ մաքառելու համար, — յեղանակներ, վոր հաջողությամբ գործադրել են տեղական մեղվապահները հեղինակի զեկավարությամբ: Փոտախտի մասսայական բժշկության յերկամյա փորձերից հետո Յերևանյան նահանգում՝ մշակվեցին այդ վարակիչ հիվանդության գեմ մաքառելու ավելի նպատակահարմար միջոցներ, վորոնք կայանում ելին առանձին մեղվանոց — բուժաբաններ կազմակերպելու մեջ, ուր բժշկությունը կատարվում եր հեղինակի նախապատրաստած անձերի միջոցով և ճշտությամբ նախորոշված ծրագրով:

Վերջին յերկու տարվա բժշկության հետևանքներն այնքան հաջող ենին, վոր թե հեղինակը և թե նրա բժշկության յեղանակին լավ տեղյակ անձններ ան հաստատում համոզմունքը կազմեցին, վոր մաքառումը փոտախտի գեմ համարավոր և և վոր բժշկության հաջողությունը նախապես ապահոված և այն դեպքում, յերբ նա կատարվում և ճշտությամբ, վորոշ ծրագրով:

Առաջաբան յերրորդ ոռուելուն հրատարակության: Այս գրքույթի յերկրորդ հրատարակությունը տարածվեց ավելի արագ, քան առաջին հրատարակությունը. չեր անցել գեռես յերկու տարի, վոր հարկ յեղակ ձեռնամուխ լինել յերրորդ հրատարակության:

Ծորհիվ մեղուների հիվանդությունների հետազոտող ամերիկացի դ-ր Ուայտի (White) դիտողությունների, ինչպես նաև իմ փորձերի, կատարված կովկասյան շերամապահական կայանի

փորձնական մեղվանոցում, այն հիվանդությունը, վոր հայտնի և «թթված վորդ» անունով, ներկայումս ավելի լավ և ուսումնասիրված, ուստի և գրքույկիս յերկրորդ հրատարակության մեջ այդ հիվանդության նկարագրությանը նվիրված եջերը լիովին վերամշակված են: Յերրորդ հրատարակության մեջ նա նկարագրվում և «պարկած վորդ» անունով (Տայ երօօ), ինչպես, իմ կարծիքով, սրամիտ ճշտությամբ անվանել և նրան դ-ր Ուայտը:

«Թթված վորդ» վերնագիրը կրող գլխի մեջ զետեղված և այն հիվանդությունը, վոր նկարագրել և Հովարդը 1884 թվին և առաջինը գործածել այդ անունը: Սրան և կցած նաև դ-ր Մատսսենի հիշատակած սնկային հիվանդությունը, վորով հիվանդանում են մեղուների ձագերը, ինչպես նաև իր բնույթով մի այլ նման հիվանդություն, վոր նկարագրել և Պրիվատ-Դոցենտ Ի. Լ. Սերբինովը «Ակադեմիկով» անունով:

Բացի սրանից նոր հավելումն և հանդիսանում խառն վարակման վերաբերյալ գլուխը, վորի ուսումնասիրությամբ հեղինակը զրազվել և վերջին յերկու տարվա ընթացքում:

Ինչ վերաբերում և մեղուների Նոսեմա (Նոզեմա) կոչված հիվանդությանը, պիտի և տանձ, վոր նա բոլորովին չե հիշատակված այս հրատարակության մեջ, վորովհետև այդ հիվանդությունը մեղուների ձագերի հիվանդություններից չե, և բացի գրանից՝ «Պչելովոճայ ՀԱՅՆԻ» ամսագիրը այս տարի առանձին հրատարակությամբ լույս և ընծայել պրոֆ. Ցանտերի հետազոտությունը «Մեղուների վարակիչ փորլուծությունը» վերնագրով: Այդպիգրույկի մեջ բավականաչափ լիակատար կերպով նկարագրված և հիշած հիվանդությունը:

Ի վերջո իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում ի. կ. Դիտերիխսին, վոր ինձ համար բեֆերատներ և կազմել ամերիկական զրքույկիներից և ամսագրերից, վորոնք նվիրված են յեղել «Պարկած վորդի հիվանդությանը»:

1914 թ. Թիֆլիս:

Առաջաբան չորրորդ ոռուերենն հրատարակության: «Փոտախտը և նրա բժշկությունը հին և նոր ձեր փեթակներում» գրքույկի չորրորդ հրատարակության մեջ, բացի մանր ուղղումներից, զետեղված են հական նշանակություն ունեցող հավելումներ:

1907 թ. Փոտախտի անխոնջ հետազոտող դ-ր Ուայտը հրատարակեց նոր ուսումնասիրություններ, վորոնք ըստ յերկույթին

խախտեցին Վատառն-Զեյնի և Զեշայրի առաջին հետազոտությունների հիմունքը փոտախտի վերաբերմամբ։ Հիշված հետազոտողները, ինչպես արդեն հայտնի և, այսպես անվանված «Յելքոպական Փտախտի» առաջացման պատճառ համարում եյին Bacillus-alvei մանրեամարմինի գարգացումը մեղուների վորդերի մեջ։

Ինչպես ցույց տվին դ-ր Ռւայտի մանրազննին հետազոտությունները, առաջին մակարուցձը (պարագիաը), վոր յերեան և գալիս գեռ ևս կենդանի վորդի որգանիզմի մեջ, մի նոր, տակավին վոչ վորդից չնկարագրված, մանրեամարմին և, վորին նա տվել և Bacillus լուս անունը։

Դ-ր Ռւայտին չե հաջողվել ստանալ այդ մանրեամարմինի դտած կուլտուրան, ուստի և վարակման արվեստական փորձեր Bacillus pluton-ի դտած կուլտուրայով մեղուներին կերակրելու միջոցով մինչև այժմ տեղի չեն ունեցել։ Մինչդեռ Bacillus ալվել դտած կուլտուրան շատ անդամ նա տվել և կերակրի հետ խառն մեղուների առողջ ընտանիքներին և դ-ր Ռւայտին վոչ մեր գեղքում չե հաջողվել փոտախտ առաջացնել։ Ինչպես հայտնի յն, յերբ մեղուների առողջ ընտանիքներին կերակրում են այդ տեսակ փոտախտ հիվանդ վորդերի մեջ պարունակած նյութով, նրանք մշտապես հիվանդանում են նույնատահասկ հիվանդությամբ։

Այս հետազոտությունների հիման վրա կյանսահնամախերը առաջարկում ե դուրս ձգել B. ալվել մանրեամարմինը, ինչպես նաև մի այլ մանրեամարմին—Streptococcus apis—յելքոպական փոտախտ և «Թթված վորդ» հիվանդություններ առաջացնողներից անկից և համարել յելքոպական փոտախտի առաջացման հավասկան պատճառ միմիայն Bacillus pluton մանրեամարմինը։

Ռւշադրության առնելով այն հանգամանքը, վոր դ-ր Ռւայտի աշխատությունը դեռևս կարոտ և հաստատման, յես նարագոր չեմ համարում դուրս ձգել B. ալվել այն մանրեների ցանկից, վորոնք ուղեկից են յելքոպական փոտախտին։ Բանն այն և, վոր յեթե B. ալվել նույնիսկ վարակման պատճառ ել վոր չինի, ինչպես կարծում ե դ-ր Ռւայտը, համենայն գեսպ այդ մանրեամարմինը, ըստ իմ և ուրիշների հետազոտությունների, մշտապես ուղեկից ե հիվանդության ալդ տեսակին։ Անկասկած և նաև, վոր ստոկած վորդի մեջ B. ալվել մանրեյի գոյությունից և ըրգիսում հիվանդության այդ տեսակին հատուկ ու բնորոշ անախորժ և գարշելի հոտը, վոր ի միջի այլոց, բացահայտ տարբերություն և զնում «Յելքոպական փոտախտի» և «Ամերիկականի» մեջ։ Բացի

սրանից այդ մանրեյի գոյությունը կամ բացակայությունը սատկած վորդի թեփուկների մեջ, նարագորություն և տալիս ձիտ դիագնոզ անելու «Յելքոպական փոտախտի» և «Թթված վորդի» վերաբերմամբ, մի հիվանդություն, վոր համենայն գեսպ ամերիքից վահանգավոր և, քան «Յելքոպական փոտախտը»։

Անկարելի յե վստահորեն ասել նույնպես, վոր B. ալվել մանրեամարմինի վոչ-հիվանդաբեր լինելու հարցը լուծված և վերջնականապես։ Այս հարցում շատ հետազոտողներ տարրեր կարծիքներ ունեն։ Իմ անձնական փորձերի ժամանակ, վորոնք, ուղիղ և, բազմաթիվ չեն յեղել, յերբ ես կերակրում եյի մասյին ճանձերին B. ալվելի զտած կուլտուրայով, վերջինները սատկում եյին աշվելի վաղ, քան այն ճանձերը, վորոնք այդպիսի կեր չեյին ստանում։ Այս պետք և ասեմ. վոր B. ալվել զտած կուլտուրայի սրսկումը տնային միների կաշվի տակ, իմ փորձերի ժամանակ, մի քանի դեպքերում պատճառ եր դառնում այդ կենդանիների մահվան և միշտ առաջացնում եր ծանր ջրակալված ուսուցցքներ։ Նույն հետեւանքները ստանում եր նաև Յեյվիներդը։

Ի նկատի ունենալով վերոհիշյալը՝ իմ զրբույկի այժմյան հրատարակության մեջ B. ալվել մանրեյին տալիս եմ նույն տեղը, վորը նա մինչև հիմա զրավել և փոտախտի բոլոր հետազոտողների գրվածքներում, իսկ դ-ր Ռւայտի ուսումնամասիրությունը զետեղում եմ իրը հավելված։

«Բժշկության» բաժնում ավելացնում եմ նոր զլուխ, ուր առաջ և բերված ամենագործնական յեղանակը վարակման գեմպայքարելիս այսպիսի գեպերում, յերբ մեղվանոցում վարակված են մեղուների բազմաթիվ ընտանիքներ։

ԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին ասաը տարվա ընթացքում մեզվապահությունը նկատելի կերպով գարգանում և Ռուսաստանի շատ տեղերում: Ավանդական ծառակերպությունը՝ միջին և կթողը՝ Հարավային Ռուսաստանում տեղի յեն տալիս շրջանակավոր փեթակներին և գրա հետ միասին փոխվում է նաև մեզվաբաւծության յեզանակը, վոր գլխավորապես հանգում և մեզվապահի ազատ միջամտությանը մեզուների ընտանիքի կյանքի մեջ: Յեզ մեզվանոցը կարող է բավարար արդյունք տալ միմիայն այն ժամանակ, յերբ մեզվապահը խելացի միջամտությամբ ոգնում է իր աշխատավորներին և կարգավորում նրանց կյանքը: Եթանակավոր փեթակն այդ գործում լայն ասպարեզ և բաց անում մեզվապահի առաջ: Եթանակավոր փեթակների տարածմամբ, անկատկած, մեզվապահների ընդհանուր տեղեկությունները ևս ավելացան մեզվաբության մասին: Ասկայն գերախտաբար նույնը չե կարելի ասել նրանց ծանոթության վերաբերմամբ մեզուների հիվանդությունների հետ, մինչդեռ այդ ծանոթությունն այժմյան, այսպես անվանված, բացինալ մեզվապահության մեջ պետք է պարտավորական լինի:

Զե կարելի անհիմն համարել գյուղական ճանճապահների դանդասները, վորոնք իրենց տնտեսությունը վարում են վոչ շրջանակավոր փեթակներում, թեև «Նորեկուկ» մեղքապահները, իրենց ըոլոր նորամուծությունների—նոր փեթակների, մեղք ծուրեցնելու մեքենաների և արհեստական մոմաթերթի—հետ միասին տարածեցին նաև մեղուների հիվանդությունները։ Այս կարծիքը հաստատելու համար կան բազմաթիվ ապացույցներ։ Կոսկած չկա, վոր չնորհիվ մեղքապահների անձանոթության վարակիչ հիվանդությունների հետ, նրանցից շատերը վոչ միայն վարակում են իրանց հաճախ շատ մեծ մեղքանոցները, առև և լայն չափերով տարածում արդ վտանգավոր ախտն ուրիշ տեղերում։

Իմ յերկարածյա հարաբերություններից մեզվապահների հետ
յես կազմել եմ այն համոզմունքը, վոր նրանց մեջ ամենից ավելի
կրթվածներն անգամ վոչ միայն շատ մութ հասկացողություն ու-
նեն կանոնավոր բժշկության մասին, այլ և կատարելապիս ան-
ձանութ են մեզուների հիմանդրությունների հաջաններին:

ՄԵՂՈՒՆԵՐԻ ՓՏԱԿՆԸ

864

ՆՐԱ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ

Φ S Ι Η S

Փտախտը (բնուլը)—մեղուների վորդերի հիվանդությունը՝ հայտնի յե մեզ շատ հին ժամանակներից: Կան տեղեկություններ, վորդ այդ զարհութելի վարակիչ հիվանդությանը մեղուները յենթարկվում ենին գեռ 2000 տարի մեղանից առաջ: Առաջին տեղեթարկվումները փտախտի մասին, վորոնք հասել են մինչև մեր որերը, հազորդել ե Արխանոտելլը: Նա և առաջինը նկարագրում մեղուների այս հիվանդությունը, վորի պատճառով ֆեթակը վատ հառ և արձակում: Արխանոտելլը կարծում եր, թե մեղուները վարակվում են այդ հիվանդությամբ մեղք հավաքելիս այն ծաղիկներից, վորոնք հիվանդ են ժամանով:

Զայնուական գործադրությունը հարցուրավոր տարբիներ ավելի է
մեղքանոցները և մեղքարույժներն այս կամ այն յեղանակով աշ-
խատել են մաքառել մեղքապահության այդ պատուհասի դիմ,
կարելի յե ասել զոր վերջին տարբիներում միայն գտնված են
մաքառման խկական միջոցներ և մշակված են հիմնագությունը
կանոնավորապես բժշկելու յեղանակներ։ Թե մեկը և թե մյուսը
հարավոր դարձան այն ժամանակ միայն, յերբ ուսումնասիրվե-
ցին հիմնագության պատճառները։ Պրեյս, Յեսելսկի և Չիշայր,
Վիտոնակոնները մասրադիտակի միջոցով հետազոտելով փոտախ-
տից վոչչացած վորդերը, Նկատեցին, զոր վորդի նեխվող զանգ-
վածը պարունակում է իր մեջ փորբիկ ձգածե մարմիններ և ձո-
ղիկներ։ Հետազա ուսումնասիրությունները ցույց տվին, զոր

այդ ձվանման փայլուն մարմինները վոչ այլ ինչ են, յեթե վոչ այն ամենամանր բուսական որգանիզմների սերմիկները կամ, ինչպես այլ կերպ անվանում են նրանց, սաղմերը, վորոնք հայտնի յեն զիտության մեջ մանրեներ (բակտերիֆաներ) անունով:

Ամենավերջին տարիներում, շնորհիվ ամերիկացի գիտնական դր Ռւայտի և գերմանացի՝ դր Մասսունի հետազոտությունների, պարզվեց, վոր պետք և զանազաննել իրարից փոտախտի յերկու տեսակները: Նրանցից առաջինը, վոր նկարագրված և դեռ 1885 թվին վատառն Զեյնի և Զիշայրի միջոցով, հայտնի յեն մեզվաղաների շրջանուն «սեպացած փորդ» անունով: Նրա պատճառը հիշված հետազոտողների կարծիքով, մի մանրեամարմին և, վոր նկարագրված և Bacillus alvei-ի, այսինքն թղիջային ծողիկի անունով:

1907 թ. դր Ռւայտը գտավ մեզուների փորդերի (թրթուուի) մեջ, բացի սովորական B. alvei մանրեյից, նաև մի բոլորովին նոր տեսակ մանրեամարմին (միկրոր): Զնայելով դր Ռւայտի բոլոր ջանքերին սուսանալու այդ նոր մանրեյի գտած կուլտուրան, նրան այդ բանը չաջողվեց: Դր Ռւայտն այդ մանրեն անվանեց Bacillus ս:

Արվեստական վարակման մի շարք փորձեր՝ կատարված ինչպես B. alvei-ի գտած կուլտուրայով մեզուներին կերակրելու միջոցով, այսպես ել մի այլ մանրեամարմին կուլտուրայով, վոր յերեխնապես յերեվում և «յերկողական փասխտի» և մշտապես այսպես անվանված «թթված փորդի» մեջ—Streptococcus apis—ավին բացառական հետևանքներ:


Եերկայում մեզուների հիվանդությունների հետազոտողներց մի բանիսը (դր Ռւայտ, Կյուստենմախեր) յելլոպական փասխտի սկզբնապատճառ չեն համարում վոչ B. alvei-ն և վոչ Streptococcus apis-ը: Նրանք այդ հիվանդության համարնական սկզբնապատճառ համարում են Ռւայտի գտած նոր մանրեամարմինը, վոր ստացել և Bacillus plutoն անունը:

Փատախտի յերկրորդ տեսակի առաջացման պատճառն և նոր հայտնագործված մի մանրեամարմին, վոր նկարագրված և Bacillus larvae-ի, այսինքն վորդնային ծողիկի անունով:


Վատառն Զեյնի և Զիշայրի նկարագրած հիվանդությունը հայտնի և նույնպես (շածկված) վորդի փատախտ անունով, իսկ Ռւայտի և Մասսունի նկարագրածը կրում և նաև ծածկված (կերպած) վորդի փատախտ անունը:

ԲԱՏ ՎՈՐԴԻ ՓԱԼԽԾԻ ՄԱՆՐԵԱՄԱՐՄԻՆԸ

(B. alvei).



Նկար 1.



Նկար 2.

Նկար 1. Զախարկովյան մասը: Առողջ վորդի պարունակությունը:
Սախարկովյան մասը: Քիչ ժամանակ առաջ մեռած վորդի պարունակությունը: Փատախտի բացիլները զետեղված են շղթաների ձևով:

Նկար 2. Զախարկովյան մասը: Փատախտով վարակված վորդի պարունակությունը մի քանի որ նրա մահից հետո: Նղթաները բաժանվել և դարձել են առանձին-առանձին ձողիկներ. մի քանի բացիլներ փուլ են սաղմիկների:


Սախարկովյան մասը: Փատախտային չորացած վորդի պարունակությունը: Սաղմիկներ:

Իր ձևով այս մարմինը ներկայանում է մեզ իրեն մի բարկ, շարժուն և փայլուն ձողիկ, վորի ծայրերը լինում են կամ բարկակ կամ սուր: Մանրադիտակով բացիլները յերեսում են բոլոր մի մասունքների և յերեխն զանազան յերկայտության շղթաների ձևով (Նկար 1):

Ձողիկների բեղմնիկները—սաղմիկները կազմված են հետևյալ կերպով: Ձողիկներն սկսում են ուսուել և ընդունել ճախարակի ձև (ա, բ, շ, դ). այս ձևը քանի գնում՝ սատիճանարար մեծանում է, միջուկի հաստության՝ կենարունում յերեան և զալիս մի անգույն և փայլուն մարմիկ (շ), վոր կազմվում և ձողիկի ներքին մասում, յերեք չորս ժամից հետո ձողիկի հետքերը բոլորովին անհայտանում են (ի).

Սաղմը ձողիկ և դաշտում այսպիս.—Նախ նա կորցնում է իր ձգաձև յերեսոյթը, փոքր ինչ կորցնում և նաև իր փայլը, մի քիչ յերկարանում և և վերջ ի վերջու սաղմը պատառվում և մի կողքից և նրա միջից դուրս և զալիս մի փոքրիկ գունավոր ձողիկ (ի):

Չողիկն առտիճանաբար թոթափում և իր վրայից սաղմի արտաքին մաշկը և ապա սկսում և բազմանալ բաժանման միջոցով, կազմելով յերկար կամ կարճ շղթաներ (1, 2). Հետո շղթաները բանդվում և դառնում են առանձին ողակներ—ձողիկներ, վորոնք



Նկար 3.

*Bacillus alvie-*ի սաղմերի և ձողիկների դարձացումը:

արդեն արբունքի հասած մանրեամարմիններ են՝ ընդունակ նորից սաղմեր տալու:


Մի շաբթ ձիշտ փորձեր ցույց տվին, վոր բացիլները, և մանավանդ նրանց սաղմերը, չափազանց կինսունակ են: Մեղվապահներն այս բանը յերբեք չպիտի մոռանան և միշտ պիտի ի նըկատի ունենան այն հանգամանքը, վոր փտախտի բեղմնիկները փտախտով վարակված ընտանիքներում անհամար քանակությամբ գտնվում են ամեն տեղ՝ թե մեղանացերում և թե մոմի, մեղրի ու ծաղկափոշու մեջ, և վոր նրանց վոչնչացնելու համար հարկավոր և լինում գործազրել ամենազորեղ միջոցները: Վորպեսզի կարելի լինի սպանել փտախտի սաղմերը ջերմության միջոցով՝ անհամաժամ և յերկու ժամ ու կես անընդհատ յեփ տալ մոմը կամ մեղրը, և այն ժամանակ միայն կարելի յէ համոզված լինել, վոր բոլոր սաղմերը վոչնչացել են ու այլ ևս չեն կարող վարակել առողջ ընտանիքներ:

Մի այնպիսի բաղադրության մեջ, վոր իր մեջ պարունակում է կարմույն թթվուտի $\frac{1}{2}$ %, փտախտի սաղմերը չեն մոռնում փեց որվա ընթացքում:

Կարբույն թթվուտի լուծվածքը, ինչպես և մրջնային ու ֆենոլի լուծվածքները, վորպիսիք գործ են դնում մեղվապահները

թժկական կերպուման ժամանակ, չեն սպանում վոչ միայն փըտախտի սաղմերն, այլ և բացիլներին: Հիշված փտախտերը ցույց են տալիս, վոր քիմիական այն բոլոր բաղադրությունները, վորոնք գործ են զրգում փտախտը բժշկելու նպատակով, ինչպես որինակ, կարբույն, սալիցիլյան, տիմոլյան, ֆենոլի և մրջնային թթվուտները, նույնպես և նավտոլը, կամֆորան, նաֆտալինն ու շատ ուրիշները, լուծված ջրի մեծ քանակության մեջ, արգելը են դառնում միայն բացիլների զարգացմանն ու բազմանալուն, առանց վարեկ ազդեցություն գործելու նրանց սաղմերի վրա:

Փտախտի սաղմերի վրա գորեզ ներգործություն ունեցող միջոցներից մեկը արել լույսն է: Բազմաթիվ փորձերը թույլ են



Նկար 4.

Բաց որդի փտախտը (Եվրոպական փտախտ ըստ Զեշայրի):

տալիս գալու այն յեղակացության, վոր արելի ճառագայթների ներգործության միջին տևողությունը,—ինչքան դա անհրաժեշտ է սաղմերը վոչնչացնելու համար,—նայելով սաղմերի հասակին, և սաղմերը վոչնչացնելու համար, մի քանի ժամվա (7 ժամ), մի որվա և նույն իսկ տատանվում է մի քանի ժամվա (7 ժամ), մի ամսվա սահմաններում: Քիմիական այն բաղադրություններից մեջին ամսվա անընդհատ յեփ տալ մոմը կամ մեղրը, վորոնք անվասու են մեղուների և նրանց վարդերի համար, ամենահական միջոցը փտախտի գեմ ֆորմալինն է: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, փորմալինի շողին սպանում է փթախտի սաղմերը քառորդ ժամվա՝ ընթացքում:

ՅԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՏԱԽՏԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՊԱՏՃԱՐԸ

(Bacillus pluton *)

Դ-ր Ռւայտի հետազոտությունները մեղուների կենդանի կամ նոր մեռած վորդերի վերաբերմամբ, յերեան հանեցին ընորոշ փոփոխություններ վարակված վորդերի աղիքներում: Նրանց պարունակությունը սովորաբար բաղկացած է սպիտակ կամ փոքր ինչ դեղնավուն դանդաղածից՝ շրջապատված թափանցիկ փրփրանման նյութերով: Յերբ մենք գուրս ենք քաշում ասեղով այդ զանդիքածը զեռ ևս չմեռած վորդի աղիքներից՝ այդ սպիտակավուն նյութը կտրվում և մասերի ե բաժանվում: Հիվանդության հետագա զարգացման ընթացքում, յերբ վորդը, ըստ յերեւյթին, արդեն մեռել ե, նրա աղիքային անցրում գտնված նյութը գտնում է փփրուն և սովորաբար վորդի պատառված շրջաթաղանթից գուրս և հոսում սպիտակավուն կամ դեղնավուն հեղուկ՝ համարկավոր պարունակության հետ միասին:

Դ-ր Ռւայտի նկարազրած սկզբնական ախտանիշները «յեվրոպական փտախտով» վարակված կենդանի վորդերի մեջ, չափազանց կարենոր են այն հիվանդության վորոշումն (դիագնոզ) անելիս:

Մինչեւ այժմ հետազոտողները գեկավարվում եյին մահվանից հետո նկատված տիտանիներով:

Եթե վորդի աղիքային անցրի պարունակության սպիտակավուն զանդիքածից մի փոքր քանակություն քսենը մանրազիտակի ապակու վրա բարակ շերտի նման և գունավորենք նրան, կը տեսնենք, վոր այդ պրեպարատում յերեան յեկան մանրիկ մարմիններ, հաճախ զույգ-զույգ միացած իրար հետ խիստ սրածայր վերջավորություններով—1 միլ. յերկարությամբ և յերկարության կեսից ավելի լայնությամբ: Բայտ Ռւայտի հետազոտությունների՝ Bacillus pluton-ը յերեւմ և վարակված վորդերի մեջ ավելի վաղ, քան մյուս մանրեները, վորոնց նա դիտել ե այդ հիվանդության ժամանակ, այն և—Bacterium eurydice, B. orpheus և B. alvei վերջինը, Ռւայտի դիտողություններին նայելով, վորդերի մահից հետո արագությամբ բազմանում և գուրս և մղում մյուս մանրեներին: և այս հանգամանքի շնորհիվ «յեվրոպական փտախտի» սկզբնական հետազոտողների կողմից նա համարվում եր այդ հիվանդության սկզբնապատճառ:

(*) Դ-ր Ելուստենմախերը առաջարկեց յեվրոպական փտախտի այդ մանրեն անվանել Zaryga բայց առաջարկեց յեվրոպական փտախտի այդ մանրեն անվանել Zaryga բայց

ԲԱՅ ՎՈՐԴԻ ՓՏԱԽՏԻ ԱՐՏԱԲԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Սկզբում գտնել փտախտը ըստ տրտաքին տեսքի շատ գըժվար ե, իսկ հին ձեր անշրջանակ փեթակներում համարյա անհնարին, վորովհետեւ այդ բանի համար պետք ե՝ ամենամեծ ուշադրությամբ զիտել այն բոլոր հացերը, վորոնց մեջ վորդ կա:

Ինչպես հայտնի յե, առողջ վորդը տեղավորված է լինում րջիցի խորքում կիսաբուրակ ձեռվ և տառի նմանությամբ: Առողջ վորդերը պարաբար են, մարգարտանման սպիտակ գույնի, և նրանց մարմինի արտաքին մաշկը վողորկ ե ու առանց կնձիռների, մինչդեռ փտախտի այդ տեսակով նոր հիվանդացած վորդն ամենից առաջ փոխում է գիրը—նա ձգվում յերկարանում ե: Վորդերը կորցնում են իրենց պարաբարությունը և թառամում, ձլուում են:

Վորդերը, հիվանդության սկզբում, վարակված են շատ մատաղ հասակից և նրանց մահը վրա յե համում սովորաբար րջիչների յերեսը կնքելուց առաջ: Վորդը զեղուում ե, մի քանիսի վրա նկատելի յեն լինում դեղնագույն բծեր: Մահվանից հետո վորդերը զառնում են զորշագույն կամ կինամոնագույն և ապա մի քանիսը սեանում են:

Վորդի նեխված զանդիքածը հատիկանման ե, չե կպչում թջիչի պատի ստորին մասին, փոքր ինչ առածքական ե յեվ ընկած թջիչի հատակին: Եա արձակում և մի տեսակ ուրուս հոտ, վոր նման և ըրտների, նեխված խեցգետնի կամ անիլինի յուղի հոտին: Հիվանդության հետագա զարգացման զեպքում վլունչանում ե եւ կնքված վորդը: Այդպիսի վորդերի րջիջային կնիքները սկզբում մուգ գույն են ստանում, և սրանով նրանք հենց առաջին հայացքից տարրերվում են առողջ վորդերի կնիքներից: Ապա կնիքները ներս են ընկնում, կնճռոտվում են և նրանցից միքանիսի վրա յերեւում են ծակոտիներ: Ժանտահոտ զանդուածը առաջի պիս մնում է կպչուն, բայց վոչ առածքական: Յերբ հիվանդությունը իրար զարգացել ե, նրան կարելի յե գտնել առանց փեթակը բաց անելու: Հիվանդ ընտանիքներում մեղուները կորցնում են իրանց աշխուժը, ծուլանում են, վոչ խմբական թոփքներ են գործում և վոչ աշխուժով գնում մեղրաբերի: Այն ժամանակ, յերբ առողջ ընտանիքները խումբ-խումբ և ուրախ գնում են աշխատանքի, փտախտով վարակված փեթակներում մեղու-


ներն անգործ շրջում են արկանոցի մոտ և նրանցից մի քանիսն աշխատում են ողափոխություն տուաջացնել փեթակում:

Հիվանդության այս ձեփ առանձնահատկությունն այն է, որ նա վարակում է վոչ միայն աշխատավոր մեղուների, այլ և բուռերի ու մայրացուների վորդերը: Բայց յերեւյթին սա ավելի վարակիչ է, քան կնրված վորդի փափառը.

Հիվանդության սկզբում, յերբ վոչնչանում են միայն չկնրված վորդերը, մեղուներն արագությամբ մաքրում են մետած վորդերի բջիջները, այս պատճառով ել այդպիսի հացերում մեղուների վորդերը յերեւմ են մեզ ցրված գրությամբ և մենք այն տապագորությունն ենք ստանում, վոր կարծես փեթակի մեջ ձու ե գրել մի ծեր և սակավարեղուն մայր: Հիվանդությունը ձգձգվող բնույթ ունի: Հաճախ նա յերեւմ է գարնանը և տմավա սկզբում: Վորավհետեւ մեղուները մաքրում են այն բջիջները, վորոնց մեջ վորդերը վոչնչացել են և ապա, մեղրաբերքի ժամանակ, լցնում այդ նույն բջիջները մեղրով, մեզ թվում և թի հիվանդությունն ինքն ըստ ինքյան վերջացել է: Մինչդեռ իսկապես հիվանդության զարգացումը վորք ինչ կանգ և առել միայն և թուլացած ընտանիքները վոչնչանում են մի տարուց հետո:

Բաց վորդի փափառը հայտնի և նույնպես Յելրուպական փափառ անունով: Այս անունը տված է նրան միայն այն պատճառով, վոր հիվանդության ծիշտ, գիտական նկարագրությունն առաջին անգամ արված է Յելրուպայում: Ինչպես ցույց տվին վերջին հետազոտությունները, բաց վորդի փափառից հիվանդանում են մեղուների ընտանիքները նաև ամերիկական մեղվանոցներում: Նայելով այն նմուշներին, վորոնք ուղարկվել են ինձ միջն Ռուսաստանից, Կովկասից և Անդրկովկասից, պետք է կարծել, վոր բաց վորդի փափառն ավելի քիչ և տարածված Կովկասում, քան ծածկված վորդի փափառը:

Յել վորովհետեւ փափառի այս տեսակը ավելի քիչ և պատճառում Անդրկովկասում, քան կնրված վորդի փափառը, տեղական մեղուները ըստ յերեւյթին ընդունակ են ավելի մեծ դյուրությամբ յենթարկվելու նրան: Հիվանդության ընթացքն այն սեղբրում, ուր յետ առիթ եմ ունեցել զիտելու «Յելրուպական փափառ», անցնում և շատ փոթորկալից և պայրարը նրա դեմ Անդրկովկասում, կարծես, ավելի դժվար է, քան այսուղ սովորական դարձած «Ամերիկական փափառի» դեմ:



Նկար 5.

Բաց վորդի փափառը (Յելրուպական փափառ):

ա. յ. կ. ծածկված բջիջներ առողջ վորդերով. ն. վորդը կորցրել ե իր բոլորակ ձեր, զարձել ե փոքր ինչ թափանցիկ, նկատելի յեն տրտիել ներ: թ. ր, գորդն ընկել ե հատակի վրա. յերկու ծաթերն ևս ուղղված են դեպի խորքը:

մ. լ. վորդերը մի քեզ ձգված են. գույնը դեղին և կամ մուգ. թափանցիկ յերեսոյթն անհետանում է:

ս. լորացած վորդ, վոր պահել ե իր ձեր, նորից լավ նկատելի յեն:

թ. լ. վորդերը զարձել են տես գորշ-մոխրագույն զանգվածներ, վորոնք կեղեր նմանությամբ ընկած են բջիջների հատակի վրա. հազվագյուտ դեպքերում միայն զանգվածն ստանում ե սկզբուն:


ո. օ. վորդեր, վորոնք չեն պահել իրենց սկզբնական դիրքը:

ԿՍՖԱՆՑ ՎՈՐԴԻ ՓՏԱԽՏԻ ՄԱՆՐԵԱՄԱՐՄԻՆԸ բարակ և սակավ շարժուն մի ձողիկ ե (յերկարությունը 25մ, լայնությունը 0, 7—8մ.), վոր կազմում և ուրիշների հետ միասին շղթաներ: Յերկար շղթաների առատ կազմությունը նկատվում և ուղեղային արգանակի մեջ: Իմ հետազոտությունների ժամանակ կուլտուրաները բոռերի վորդից պատրաստած արգանակի մեջ (սաղմերի ցանվածք) կազմում եին շափազանց յերկար, անշարժ, բարակ և կծիկի նման թնջկված թելեր: Զողիկների գոյությունը յերեան և հանվում գլխավորա-

* Ամերիկական փափառը կը ունի և նաև «Վորդերի ժամանակ» անունը: Կյուսումն Մալիերն առաջարկում է անվանել այս հիվանդությանը Larva pestis:



պես քիչ ժամանակ առաջ մեռած ու դեռ ևս մուգ գույն չստացած վորդերի մեջ։ Մուգ գույնի զանգվածի մեջ նկատվում են համարյա բացառապես սաղմեր (Նկար 6). Այն պրելապատում, վոր պատրաստված են մեղուների վորդերից և ուղեղային ագարի մեջ, ու ամենից ավելի հաջող այն ժամանակ, յերբ ջերմության տատիճաւում 27 և ըստ Ցելսիոսի:



Նկար 6.

Bacillus larvae-hi սաղմերը

Ներ: Այս բնորոշ կազմություններն ստացվում են միայն ծածկված վորդի փտախտը քննելիս, և հիշված մարմնիներն այնքան սովորական են այդ հիմնդությունից մեռած վորդի պրելապատում, վոր դ-ր Մաասսենը խորհուրդ է տալիս ընդունել նրանց, վորպես ախտացույց (դիագնոստիքական) նշան ծածկված վորդի փտախտը վորոշելիս։


Իմ բազմաթիվ հետազոտությունների ժամանակ, յերբ քննության ելին յենթարկվում Անգրկովկասից ստացված՝ փտախտի այդ ձևի նմուշներ, չե կարելի ասել, թե բոլոր պրելապատում հաջողվելիս լիներ յերկան հանել սպիրոինետանման մարմնիներ։ Ե. larvae-hi սաղմային պրելապատները, պատրաստված փտախտի չոր կեղեններից, այնքան բնորոշ յերեսույթ ունին, վոր հիմնդությունը վորոշելու համար սովորաբար բավական ե լինում պրելապատ պատրաստել փտախտի զանգվածից՝ զոտն զրի մեջ։

Այս սաղմերը մի քիչ փոքր են Ե. alvæe-hi սաղմերից (յերկարությունը 1,3—1,4 մ. լայնությունը 0,6—0,7 մ.):

Ե. larvae-hi ետկան առանձնահատկությունն այն է, վոր նաև նկարող և զարգանալ սովորական մննդատու միջավայրերում

(նյութերում) — մսային պիպտոնի՝ սոսնձանյութի և ագարի մեջ*), այլ զարգանում և միմյայն այնպիսի միջավայրերում, վորոնք պատրաստված են մեղուների վորդերից և ուղեղային ագարի մեջ, ու ամենից ավելի հաջող այն ժամանակ, յերբ ջերմության տատիճաւում 27 և ըստ Ցելսիոսի:

Համարյա Ռւայտի հետ միաժամանակ Ե. larvae-ն նկարագրեց նաև դ-ր Մաասսենը, վոր գտել եր, այդ բացիլը Բրանդենբուրգուրդից ուղարկված մոմահացի (չեչի) մեջ, ուստի և Մաասսենը անվանեց նրան Ե. brandenbürgiensis.



Նկար 7.


Կրգված վորդի փտախտը

ԿԱՐՎԱԾ ՎՈՐԴԻ ՓՏԱԽՏԻ ԱՐՏԱՎԻՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Սկզբում այս հիմնդությամբ բոնվում են կնքված վորդերը։ Այդպիսի վորդերի կնիքները փոքր ենց մուգ գույն են ստանում,

*.) Մանոթություն, դ-ր Մաասսենը նկատել է Ե. larvae-hi բույլ զարգացումը մայիս պիպտոնի ագարի մեջ, վորի հետ խառնված և նաև կլուկոզի

ապա ներս են ընկնում և հետո նրանցից մի քանիսի վրա յերեռում են ծակոտիներ: Յերբ հիվանդությունը զեռ ևս նոր է, սատկած վորդերի թիվը քիչ է լինում (10—12 հատ), բայց նրանց քանակությունն որ ըստ որեւ ավելանում է: Յեթե վորի և սրածայր գործիքով բաց անենք հիվանդ բջիջների կնիքները կը տեսնենք, վոր նրանց մեջ, առողջ, սոլիտակ վորդերի կամ հարսնյակների փոխարեն, գտնվում է թանձր, ձգվող, կպչուն և կինամոնագույն զանգված, վոր վատ սոսնձի հոտ և արծակում: Յերբ նրա մեջ մենք կոխում ենք գնդասեղի կամ լուցկու ծայրը, հեղուկը ճգիւմը՝ յերկարանում ե թելի նման(նկար 8):




Նկար 8.

Յերբ հիվանդությունը սաստիկ գարգացել է, նրան կարելի յէ յերեան հանել առանց փեթակը բանալու: Այդ ժամանակ մեղությունները համարյա խմբական թոփշներ չեն գործում. նրանք թուանում, կորցնում են իրենց աշխույժը, փեթակից ծանր հոտ և զալիս. արկանոցի մոտ, առաջնատախտակի վրա նկատվում են գորշագույն հատիկներ՝ նման ակնամոմին: Միենուին ժամանակ մեռած վորդեր պատահում են վոչ միայն կնքված բջիջներում, այլև այսպիսիներում, վորոնք բաց են և վոչ բոլորովին կնքված: Վերջինների մեջ վորդերը ճգված են լինում՝ բջիջների յերկարությամբ յեվ կամած պատի ստորին մասին: Վորդերը ժամանակ անցնելուց հետո չորանում են և դառնում թեփուկներ՝ ամուր կպած բջիջի կողմանցին պատի հիմունքին: Այն հացերը, վորոնց մեջ չորացած վորդեր կան, այն աստիճան բնորոշ և տիպիքական են, վոր բարդական և մի անդամ նայել վորուելու համար կնքված վորդի փուախտով վարակված հացը:

Մեղքապահներն առանձնապես պետք ե ուշադիր լինեն զարնան և աշնան ժամանակ կասկածելի փեթակները նայելիս և մանրագննին կերպով պետք ե նայեն այն հացերը, վորոնց մեջ մերագննին

դուները ձագ են հանել: Յեթե վարակված հացերը բռնենք այնպես, կոր լույսն ընկնի բջիջների խորքը, այդ դեպքում վերեռում հիշված չոր թեփուկները լավ տեսանելի յեն դառնում նույնիսկ շատ հին ու սեացած հացերի մեջ: Նայելու ամենից ավելի հարմար ձեն այն ե, յերբ բռնելով շրջանակի վերին ձողի ծայրերից՝ հացն իշղցնում ենք մեր կրծքից ցած կամ թի շուռ ենք տալիս նրան այնպես, ինչպես այդ ցուց է տված նկարի վրա (նկար 8):



Նկար 8.

Հացի այն գիրքը, վորով ամենից ավելի դյուրին և նկատել ամերիկական փուախտը:

Այն բջիջները, վորոնց մեջ կան փուախտի թեփուկներ, նըման են նույնպես փորուծությունից կեղուստված բջիջներին, վորոնց նշանները հետեւյալներն են,—կղկղանքը կպած և բջիջի վերին շրթունքին, ուր նա կազմում է մի թեփուկ վոր չի հասնում բջիջի հատակին, և կամ կղկղանքն ընկած և բջիջի հատակի վրա կղկղի ձևով՝ կազմված անկանոն հեղուկանման կաթիլից: Յերբ մանրագիտակով քննում ենք մեղքուների կղկղանքը, նրանց մեջ սաղմեր չենք զանում, մինչդեռ փուախտի կղկղներից պատրաստած պրեպարատաները դիտելիս՝ տեսողության ամրող տարածությունը լիքն ե լինում նրանցով:

Տեղափոխելով հիմանդ փեթակներից առողջների մեջ այնպիսի հացեր, վորոնք պարունակում են իրենց մեջ փտախտի չորացած թեփուկներ, մեղվապահները սովորաբար վարակում են իրանց մեղվանոցները:

Իմանալու համար, թե վորքան փտանգավոր են առողջ ընտանիքների համար այդպիսի շրջանակները, յես հետեւալ յերկու փորձն արի կովկասյան Շերմապահական կայանի փորձնական մեղվանոցում:

Առաջին փորձ.

1911 թվականի ապրիլի 2-ին: Մի զորեղ ճանձալից, առողջ ընտանիքի բնի մեջ տեղում (Դադան-Բլատտի փեթակի մեջ) դըրվեց այնպիսի շրջանակ, վորի հացն իր մեջ ուներ կնքված վորդի փտախտով վարակված բազմաթիվ բջիջներ (B. larvae): Շրջանակն ուղարկված եր Նարաքիլիսա գյուղից 1910 թվի հուլիսի 21-ին և պահպում եր ինձ մոտ ինն ամսվա ընթացքում:

Ահափասիկ մի քանի հատվածներ իմ դիտողությունների հուշատերից այդ ընտանիքի վերաբերմամբ:

Ապրիլ 6-ին: Մեղուները ծածկեցին շրջանակը. բջիջների հատակը հղկած-մարքած և պատրաստած ձու զներու համար: Շրջանակը տեղափոխվեց և դրվեց այն հացերի մոտ, վորոնց մեջ ավելի վորդեր կան:

Ապրիլ 13-ին: Փեթակի մեջ ամեն համակի վորդեր կան չորս շրջանակից վրա: Փտախտով վարակված շրջանակի մեջ կան ձվեր և 3-4 որական փորդեր:

Ապրիլ 16-ին: Մանրազննին կերպով նայվեց բունը. հիմանդության նշաններ չգտնվեցին:

Ապրիլ 19-ին: Փտախտով վարակված շրջանակի մեջ նկատվեց մի մեռած վորդ, վոր գեռ և չեր լուծվել. այս շրջանակին կից յերկու ուրիշ շրջանակների կնքված բջիջներում գանգեցին մեկ-մեկ հատ լուծված վորդեր: Մանրադիտական հետազոտությունը և մեղուների վորդերի կուլտուրան առաջին դեպքում յերեւան հանացին B. larvae-ի ձողիկները: Կնքված բջիջներում մեռած վորդերի զանգվածը մանրադիտակով հետազոտելիք՝ գոնիցին բավականաշախ մեծ քանակությամբ սաղմիկներ և քիչ թվով ձողիկներ: Սովորական աղարի վրա ցանցվածները շանեցին: Իսկ բոլոր վորդերից կազմված արդանակի կուլտուրաներում զանգվացին կծիկներ B. larvae-ի յերկար ու թնջկված թելերց:

Այսպես ուրեմն մեղուների ընտանիքը փտախտային շրջանակից վարակվեց 17-րորդ որը:


Երրորդ փորձ.

Ապրիլ 2-ին: Առողջ և ուժեղ ընտանիքի բնի մեջտեղում դրվեց մի շրջանակ, վոր նախընթաց որը հանգած եր հիմանդ փեթակից: Այդ հացի մեջ կար մոտ 3 փունտ մեղր և հինգ բջիջ-չորացած կեղեռվ:

Ապրիլ 6-ին: Հացը մաքրված և մայրը ձու և զրել: Ապրիլ 13-ին: Նոր դրված հացի մեջ կան կնքված առողջ փորդեր: Ապրիլ 16-ին: Նկատվեցին փտախտի առաջին նշանները—յերկու մեռած ու զետ ևս չուծված վորդ փտախտային շրջանակի վրա և յերեք համ լուծված կեց շրջանակի վրա:

Մանրադիտական և բակաերի լուզիքի կան հետազոտությունը ցույց տրվեց, վոր ընտանիքը վարակված և B. larvae-ով:

Յերկրորդ փորձի ժամանակ ընտանիքի վարակումը տեղի ունեցավ ավելի վաղ—15-դ որը:



Հովհարդը (Howard) 1896 թվին գտավ, վոր «թթված վորդի» հիվանդություն առաջացնողը իր նկարագրած այն առանձին սունկն է, վոր նա անվանել եր *Aspergillus Pollinis*: Բորբոքայս տեսակը հաճախ յերևան է գալիս ուրիշ բորբոքած մնկամարմինների հետ միասին գարնանը հին մօմահացերի և փչացած ծաղկափոշու վրա:

Ապա 1906 թվին Մասսակեր հիշատակում և մեղմաների մի հիվանդության մասին, վոր, նրա կարծիքով, առաջանում է վորդերի մարմնի մեջ *Aspergillus flavus* սունկի զարգացմամբ, վորհաճախ արտաթորպվում է վորդի, հարսնյալի և կաղմակերպված մեղմի մարմիններից:

Այսպես ուրիշն Հովարդի և Մասսենի նկարագրած հիվանդությունները պետք է կցիլ անկայիններին:

Հիշված հիվանդություններին շատ մերձագոր պետք է համարել նաև Ակտինոմիկոզ հիվանդությունը, վոր առաջին անգամ նկարագրել ե Ի. Լ. Սերբինովը *):

Հովարդի, Մասսենի և Սերբիովի նկարագրած մանրեամարմինները գարնանը հաճախ պատահում են հին մոմահացերի և սատկած ձագերի մեջ:

Նայելով իմ զիտողություններին և ամերիկական մեզգապահական վերատեսությունների՝ Փիլիպսի (Philips) և Ուայտի (White) զեկուցումներին՝ մեղունների ձագերի մահացումը այդ մանրեամարտիններից սովորաբար չէշին և լինում և մեղունների ընտանիք-ները շատ չեն թուլանում, ինչպիս և մրսեցրած ձագերի զելքում:

Բժշկել այդպիսի ընտանիքները անհրաժեշտ չեն. պետք են միայն ձեռք առնել հետևյալ միջոցները. Գարնանը, յերբ մեղքաբերք չկա, այն ընտանիքների փեթակներից, զորոնց մեջ կը գտնվեն շատ բորբոսնած մոմահացեր ծաղկափոշով կամ մեղրով, պետք են հսուացնել այդպիսիները և նրանց փոխարեն դնել նորերն ու մաքուրները, վորպեսզի մեղուները հարկադրված չլինին մարբերու հին մոմահացերը. և հարկավորված գիպքում մեղուների ընտանիքը պետք են կերպարների շաքարի սիրուղով. Այս միջոցները բաժական են ձագերի մահացումը դադարեցնելու համար:

ՊԱՐԿԱՅԵՎ ՀՈՐԴ (SAC BROOD)

Այս հիվանդությունը նոր չե. բազմաթիվ մոմանացերի նմուշներ, վորոնց մեջ մահացել եցին մեղուների վորդերը տվյալ հիվանդությունից, ուզարկվում եցին ինձ հետազոտության համար թե միջին Ռուսաստանից և թե Անգլիովեկանից:

Նա սպատիկ տարածված է Լոռու և Փամբակի շրջաններում, ինչպիս նաև Լենինականի շրջակայքում, ուր մեծ թաս և հասցնում մեղվանցներին: Այս գրքույթի նախընթաց հրատարակությունների մեջ յև նկարագրել եմ այդ հիվանդությունը «թթված վորդ» անունով: Իսկ դժբ Ուայտի (G. Z. White) ուսումնակրությունների հրատարակությունից հետո այս հիվանդությունը պետք է հանել և առանձնացնել այսպես անվանված «թթված վորդի» հավաքական հիվանդությունների շարքից և անվանել պարկածն վորդ» կամ «պարկածն հիվանդություն», ինչպես, իմ կարծիքով, սրամտարար անվանել և նրան ամերիկացի հետազոտող Գ. Ռ. Ուայտը:

Դաստիարակության մասին պահանջմանը՝
Դ-ր Ռևայտը ուսումնասիրում եր այս հիվանդությունը
1902 թվից և վեց տարվա ընթացքում քննել ու ուսումնասիրել և
մոմահացերի ամենի քան 326 նմուշներ, վոր նա ստացել եր զա-
նազան մատուցուցակ:

«Պարկածի վորդի» զլիավոր տարբերությունը փախտի յերկու տեսակներից կայանում է նրանում, վոր մահացած վորդի միջ չեն յերեսում հատուկ մասրեներ, յերբ վորդիրի պարունակությամբ «ցանվածք» և կատարվում արվիստական սննդարար միշտավառում:

Յերբ յես հետազոտում եղի նույն տեսակ փորդեր, ինձ և
ըստ հաջողվեց ստանալ մանրեների զարգացումը վաշ սովորական
սննդարար միջավայրում և վոչ հատկապես մեղուների ձագերից
կամ ուղեղային ազարից պատրաստված միջավայրում։ Բայց և
այսպես ինչպես ցույց տվին առողջ ընտանիքների վարակման
փորձերը, վոր կատարել եր Ռևայտը, ինչպես և յես Կովկասյան
Շերամապահնական կարանի մեղվանոցում, այդ հիմանդրությունը
անկասկած վարակիչ է։

«ՊԱՐԿԱՁԵՎ ՎՈՐԴԻ» ՆՅԱՆԵՐԸ

Հիվանդության սկզբնական շրիեալու ժամանակ, նրա զարգացման առաջին շրջանում, մեղուների ընտանիքը նկատելի կերպությամբ առաջնահանձնում է առաջին առաջնահանձնումը:

^{*)} *Stu* Report of the meeting of Inspectors of apiarists.
E. E. Philips. The treatment of bee diseases.

պով չի թուլանում: Զագերը մահանում էն բջիջներ կնքելուց հետո: Յերբ հիվանդությունը խիստ զարգացած է, ամենից առաջ աչքի յե ընկնում այն, վոր ձագեր պարունակող բջիջները ցրված են լինում այս և այն տեղում: Սատկած վորդերը միշտ պատկած են ձգլած դրությամբ մեջքի վրա՝ բջիջի ստորին կողի յերկարությամբ: Հաճախ պատահում են այդպիսի նշաններով սատկած վորդեր շնչված բջիջներում: Բատ յերեւութիւն մեղուները բաց են անում այդ բջիջների կնիքները: Յերեւմն կնիքները ունենում են ծակեր, մի նշան, վոր ցույց ե տալիս, թե մեղուները կնիքները կիսատ են թողել: Այս հիվանդությունից մահացած վորդեր կորցնում են իրենց սովորական գույնը, ստանում են սկզբում գեղնավուն գունավորումն, ապա յերեւմնապես մոխրագույն են գառնում և վերջ ի վերջո հասնում կինամոնագույնին: Մահացած ձագի մարմին ձեւ չե փախվում: Հիվանդության բնորոշ նըշանն այն է, վոր վորդերի մարմին արտաքին թագանթը դժվարությամբ և պատովում, ուստի և մահացած վորդը առանց առանձին վնասների ասեղով հեշտությամբ դուրս ե հանվում բջիջից պարկի նման և վորդի այս հատկության շնորհիվ ե, վոր դ-ը Ռւայտը այս հիվանդությունը անվանել և «պարկած վորդ» (sac brood).

Այս պարկածի վորդի պարունակությունը ջրալի յե, սովորաբար առանց հոտի, վոր զգալի չի լինում նույնիսկ այն ժամանակ, յերբ ընտանիքը ստատիկ և վարակված:

ԱՌՈՂՉ ԸՆՏԱՆԻՒԹՆԵՐԻ ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՐԱԿՄԱՆ ՓՈՐՁԵՐ «ՊԱՐԿԱՁԵՎ ՎՈՐԴԻ» ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄՔ

Դ-ը Ռւայտը փորձերով հաստատել է, վոր «պարկածի վորդի» հիվանդությունը կարող ե փոխվել հիվանդ ձագերից առողջներին: Նա արել ե Փիլտրային վարակման վեց փորձ յերեր ընտանիքների ձագերից, վորոնք նույնպես արվեստականորեն վարակված ելին զանազան տեղերից ստացված վարականյութով:

Խնչպես վերեւում ցույց տրվեց, ձագի միկրոսկոպային հետազոտությունը և փորձերը ստանալու մանրեամարմինների կուլտուրա-վարակված ու մահացած վորդերից, խնչպես այդ փորձերի ժամանակ, այնպես ել այն նմուշների ուսումնասիրության միջոցին, վորոնք ստացված ելին անմիջապես մեղվանոցներից, չտվին վոչ մի հետևանք, այսինքն չհայտագործվեց վոչ մի մանրեամարմին,

վորին կարելի լիներ վերագրել հիվանդության ծագումը: Այս պատճառով դ-ը Ռւայտը հանում եր բջիջներից հիվանդ և սատկած վորդերին, տրորում մանրեազուրկ (սուերիլիզացիայի յենթարկած) ջրի մեջ, և ստացված հեղուկը անցկացնում Բերկֆելդի ֆիլտրի միջով: Մեղուների յերեք հիվանդ ընտանիքներից, բայց ամեն մեկից առանձին, ստացվեցին լուծվածքներ, վորոնք շաքարձրի հետ խառնած տրվեցին վեց առողջ ընտանիքների՝ յերկուսական բաժին յերեք ֆիլտրների ամեն մեկից: Այս տեսակ վատվատի հետևանքն այն յեղագ, վոր բոլոր վեց ընտանիքներն պատվատի միջունական այս յեղագ, վոր բոլոր վեց ընտանիքներն իվանդության բնորոշ ախել վարակվեցին «պարկած վորդի» հիվանդության բնորոշ ախանիչներով: Բացի վարակման այս վեց փորձից, դ-ը Ռւայտը վարակեց կրկին յերկու առողջ ընտանիքներ: Վորպես նյուութ այս վարակեց կրկին յերկու առողջ ընտանիքների մեջից: Այս պիսով տասնեմեկ ընտանիքներում «պարկած հիվանդություն» առաջ բերվեց առողջ ընտանիքները հիվանդ ընտանիքներից վերցրած վարականյութով (Yirus): Կերակրելու միջոցով: Տասնեմեկ ընտանիքներից ութի մեջ հիվանդության ծագման պատճառը Yirus-ն եր, վոր անցել եր Բերկֆելդի ֆիլտրով:

Մեղվապահները վազուց գիտեյին զանազանել «պարկած վորդի» հիվանդությունը ցյեվրոպական» և «ամերիկական» փոտախից: Ռւայտի փորձերը ապացուցանում են, վոր այդ հիվանդությունը վարակիչ և առաջանում է մի այնպիսի ախտածին մարմինից, վոր անց ե կենում Ֆիլտրի միջով:

Դ-ը Ռւայտը իր աշխատության մեջ հետեւալ յեղակացությունն է անում: —

«Պարկածի վորդը»—մեղուների ծագերի հիվանդություն է, առաջացած մի այնպիսի վարակիչ մարմինից, վոր չափազանց փոքր ե կամ այնպիսի հատկություն ունի, վոր անց ե կենում Բերկֆելդի ֆիլտրի ծակոտիների միջով:

«ՊԱՐԿԱՁԵՎ ՎՈՐԴԻ» ԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՐԱԿՄԱՆ ՓՈՐՁԵՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՈՎԱԿԱՅԱԿԱՆ ԾԵՐԱՄՄԱԿԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ ՓՈՐՁԱԿԱՆ ՄԵԼՎԱՆՈՑՈՒՄ

Փորձերը կատարվեցին 1911 թվականին յերեք առողջ ընտանիքների վրա, վորոնց բների մեջ տեղում դրվեցին մոմահանչեր այնպիսի ձագերով, վորոնք մահացել ելին պարկած հիվան-

դությունից: Ընտանիքներից յերկուսը վարակվեցին Անդրկովկասից (Քոլագիրան կայարանից) ստացված մոմահացերով, իսկ մեկը՝ Կամենեց-Պողոսկից ստացվածով: Յերեք առողջ ընտանիքներն ել վարակվեցին այդ հիվանդությամբ: Առաջին մահացած վորդը գտնվեց փեթակներից մեկի մեջ՝ 17-րորդ որը:

Առաջին ամարային սեղոնի ընթացքում յերեք ընտանիքների մեջ ել հիվանդության զարդացումը չափազանց դանդաղ եր առաջ գնում: Հետևյալ 1912 թվականի ամառային սեղոնին մահացած վորդերի թիվը համառում եր 5—6-ի յուրաքանչյուր շրջանակի վրա, վորոնց մեջ վորդեր կային: Բոլոր յերեք ընտանիքների մեջ նկատվում եր ձագերի ցրված դրություն, ինչպես այդ լինում ե շատ վատ մայր ունեցող փեթակներում: Ակներե ե, վոր մեղուները դուրս եյին ձգում բջիջներից նորածին վորդերին: Սեղոնի վերջում—սեպտեմբերին, ընտանիքներից մեկը մնաց անմայր: Աշնան դեմ փորձի յենթարկված յերեք ընտանիքն ել նկատելի կերպով թուլացան:

Գարնանային զննության ժամանակ, 1913 թվականի մարտ ամսի սկզբին, յերեաց, վոր ընտանիքներից մեկը հանգել ե: Փեթակում գտնվեցին մի բուռն սատկած մեղուներ: Յերկրորդ ընտանիքը ապրեց մինչև մայիսի 10-ը, յերբ նրա փեթակի մեջ մնացել եյին միայն բիչ քանակությամբ մեղուներ մոր հետ միասին (ընտանիքը հանգըրինք ծխով): Յերրորդ ընտանիքը չափազանց թուլացել եր. նրան ուժեղացրինք այլ մեղուներով և կերակրեցինք, ու այս դրությամբ նա հասավ ձմբանը: Մի շարք դիտողություններ և «պարկածե վորդի» բժշկության փորձեր, վոր յես կատարել եմ Անդրկովկասի զանազան վայրերում, բերին ինձ այն համոզման, վոր այդ հիվանդության ընթացքը չափազանց դանդաղ ե: ընտանիքները սաստիկ թուլանում են և մահանում վարակվելուց յերեք-չորս տարի հետո: Հիվանդությունը չափազանց համառ բնույթ ունի և գժվարությամբ ե յենթարկվում բը-ժշկության այն դեպքերում, յերբ հիվանդ ընտանիքներում չեկիրառվում այն բժշկությունը, վորպիսին գործադրվում ե փտախտի յերկու տեսակի դեմ մաքառելիս: Հիվանդությունն ինքն իրան համարյա յերեք չե անցնում և ընտանիքները հանգչում են միայն ավելի դանդաղորեն, քան փտախտի յերկու տեսակով վարակված լինելու դետքում:

ԽԱՌՆ ՎԱՐԱԿՈՒՄ

Այս անունով հասկացվում են մեղուների ձագերի բարդ հիվանդությունները, այսինքն յերբ մի ընտանիքում նկատվում են այնպիսի հիվանդ ձագեր, վորոնք բռնված են յերկու տեսակ հիվանդությամբ:

Յերբեմնապես պատահում է դիտել այնպիսի ընտանիքներ, վորոնք միաժամանակ վարակված են թե «յեվրոպական» և թե «ամերիկական» փտախտով: Ավելի հաճախ պատահում են ընտանիքներ՝ վարակված «յեվրոպական փտախտով» և «պարկածե վորդի» հիվանդությամբ: Էստ յերեսույթին, հիվանդության խառն ձևերը հետեւանք են այն բանի, վոր մեղվապահը միացնում է իրար հետ այդ հիվանդություններով բռնված զանազան ընտանիքներ, ինչպես նաև խառնում է միմյանց հետ նրանց բների շրջանակները:

Հիվանդության ընթացքը այն ընտանիքներում, վորոնք միաժամանակ վարակված են և «յեվրոպական փտախտով», վորից զիսավորապես վոչնչանում են բաց բջիջների վորդերը, և «ամերիկական փտախտով», վորից մահանում են կնքված բջիջների ձագերը, սովորաբար չափազանց փոթորկալից բնույթ ունի: Վարակված ընտանիքները շատ շուտ թուլանում են: Յեվ առհասարակ սովորական բժկությունից—ֆորմալինով ծուխ տալուց և ընտանիքները յերկու անգամ նոր բների մեջ տեղափոխելուց հետո, վոչ մի հույս չի մնում, վոր նրանք սեղոնի վերջին ուժի գան և վոչ միայն ապահովեն իրենց ձմբան պաշարով, այլ և հաջող կերպով ձմերեն: Բժշկել այդպիսի անհուսալի ընտանիքները չարժե: Ավելի լավ և վոչնչացնել նրանց՝ ձեռք առնելով բոլոր նախազգուշական միջոցները:

Նույնը պետք ե ասել նաև «յեվրոպական փտախտով» և «պարկածե վորդի» հիվանդությամբ միաժամանակ վարակված ընտանիքների մասին:

Այս հիվանդություններով արվեստական վարակումն կատարել եմ յես Եերամապահական կայանի փորձնական մեղվանում, մի ընտանիքի վերաբերմամբ:

Յերբ արվեստականորեն առողջ ընտանիքը վարակվում է «պարկածե վորդի» հիվանդությամբ, ամառային առաջի սեղունում զժվարությամբ կարելի յե գտնել մի քանի սատկած վորդեր կնքված բջիջների մեջ, և հիվանդությունը սաստիկ զարգանում

և միայն յերսըդ տարին, բայց յեթե առողջ ընտանիքը վարակում ենք միաժամանակ «յելքոպական փտախտով» և «պարկածն փորդի» վարակով, հիվանդությունը չափազանց արագ զարգացման ընթացք և ստանում և վարակած ընտանիքը արագ թուլանում եւ Այսպիսի ընտանիքներ վարակումից $1\frac{1}{2}$ ամիս հետո համարվում են արդեն անհուսալի:

Ընդհանրապես կարելի յե ասել, վոր խառն վարակումը շատ ավելի համառությամբ դիմադրում է բժշկության, քան փտախտի սովորական տեսակները և մենք հաճախ հարկադրված ենք լինում խառն վարակումով հիվանդ ընտանիքները համարել անհուսալի:

ՄՐՄԵՑՐԱՌ ՎՈՐԴ

Մեղվապահներն այնքան քիչ ծանոթ են փտախտի նշանների հետ, վոր շատերը նրանցից, նույն իսկ հմուտները, շփոթում են այս հիվանդությունը վորդի հասարակ նեխման հետ, վոր հայտնի յե մրսեցրած վորդ անունով: Այս անունը տալով՝ հասկցվում ե մեռած վորդը՝ թե բաց և թե կնքված: Ինչպես մեկի, այնպես ել մյուսի մահն առաջ ե գալիս ամենից հաճախ ցրտից, կերակրի պակասությունից և նրա վատ հատկությունից: Հիվանդությունը սովորաբար նկատվում և գարնանը, յերբ տաք որերից հետո անսպասելի կերպով վրա յեն հասնում ցուրտ որեր: Մեղուները, հանկարծական ցրտից բռնված, հավաքվում են միասին և ձմեռվա նման կծիկ են կազմում. զանազան հասակի վորդերը մնում են չծածկված, մրսում են և մահանում: Նույն բանը պատահում ե և այն ժամանակ, յերբ մեղրաբերքի անակնկալ դադարման պատճառով, փեթակի մեջ զգացվում ե մեղրի և ծաղկափշու պակասություն: Յերկու դեպքում ել մեղուները սովորաբար բաց են անում բջիջների կսիքները և դուրս ձգում վորդերին փեթակից:

Յեթե ձագի մահացությունը տեղի յե ունենում զորեղ ընտանիքի մեջ, մեղուները դուրս են տանում դիակները վեթակից՝ նախ քան նրանք կը սկսեն նեխվել իսկ թույլ ընտանիքի մեջ դիակների մաքրումն արագությամբ չե կատարվում, ուստի և նրանք սկսում են նեխվել բջիջների մեջ: Մրսեցրած ձագի նշանները որանք են—վորդերը սաստիկ ուռչում են. նրանց վրա, զանազան տեղերում, յերեւում են մութ կետեր և թերե: Մի փոքրիկ ձողի ձայրով այդպիսի վորդին թեթեակի դիպչելուց և յեր-

բեմն նաև ինքն իրան, արաքված կաշու տակից, դուրս և հոսում սպիտակ—կաթնագույն հեղուկ: Բանի նեխումն ավելի և ավելի սաստկանում ե, նեխվող զանգվածի գույնը դասնում և գորշ և ապա ավելի ևս մուգ: Վերջում նեխված զանգվածը կարծրանում ե և ընկնում բջիջի հատակին, բայց վոր ամենից գլխավորն ե՝ մեռած վորդը չի ընկունում հյուսնի սունձի մուգ-կարմրավուն զույնն յեվ նրա նոտը չի արձակում. շունի կպչուն հատկություն, չի ծզվում թելի նման, յերբ շոշափում ենք նրան լուցկու ծայրով, յեվ յերբեք չի կպչում բջիջի կողմային պատին:

Մեղվապահը բժշկության վոց մի միջոցի չպիտի դիմի, յերբ ձագը մեռել և մրսելուց:

Զափազանց թուլացած ընտանիքները մեղուներով և կընքված վորդերով ուժեղացնելը շատ շուտ ոկնում և նրանց և նրանք արագությամբ ուժի յեն գալիս:

Ստորև բերված ցուցակի մեջ համախմբված են բաց վորդի փտախտի, կնքված ձագի փտախտի և պարկածն վորդի նշանները:

ԲԱՅ ՎՈՐԴԻ ՓՏԱԽՏԻ, ԿՆՔՎԱՅ ՁԱԳԻ ՓՏԱԽՏԻ ՅԵՎ ՊԱՐԿԱՅԵՎ ՎՈՐԴԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Բաց վորդի փտախտ.

(Յելքուպական փտախտ)

1. Քիչ և տարածված կովկասում և սովորական և միջին մուսաստանում:
2. Վորդերը վարակվում են մատաղ հասակում. վարակվում ե և կնքված ձագի աննշան տոկոսը:
3. Վորդի զույնը սկզբում դեղնավուն և, դեղին բծերով, ապա ամբողջովին շագանակագույն՝ սինչե սև սահմանը:
4. Կսիքները ծածկված են և կորցրել են իրանց նախկին ձեր:
5. Մեղուները մաքրում են այն բջիջները, վարոնց մեջ մեռած վորդ կա:
6. Նեխված զանգվածը հատիկանման և և քիչ ձգվող:
7. Բրանքի, հոտած խեցգելսնի, նարնջի խխտ հոտ:
8. Կսիքները պինդ չեն ամբացրած:
9. Վարակում և բսոր և մայրացու վորդերը:
10. Նեխված զանգվածն ընկնում և հասակի վրա:
11. Մանրեամարմին B. Pluton և Bacillus ալվե:
12. Վարակիչ եւ:

ՓՏԱԽՏԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Բաց և կնքված ձագի փոտախտի հաղորդումն ու տարածումը տեղի յեն ունենում գլխավորապես մեղրի, ծաղկավոշու, հացերի, ջրի, բամու և այլ միջոցներով։ Ամենից ավելի հաճախ հիվանդության տարածողները լինում են աշխատավոր և աննդատու մեղուներն, ինչպես նաև իրանք մեղվապահները։

Ամբողջ մեղվանոցներ փոտախտով վարակելու սովորական յեղանակը մեղուների գողությունն է։ Փոտախտով հիվանդ ընտանիքներն որ ըստ որե թուլանում են, դառնում սակավաճանճ, դադարում են իրանց բնակարանն ու նրա միջի պաշարը լավ պաշտպանելուց ու այսպիսով առիթ են տալիս հարձակվելու իրանց վրա զորեղ, բազմաճանճ ընտանիքներին, փորոնք վարակված փեթակներից մեղր հափշտակելով՝ հիվանդությունը փոխազրում են իրանց հետ զորեղ և առողջ ընտանիքների մեջ։ Մեղուների ձագի վարակումը փոտախտից տեղի յե ունենում գլխավորապես կերակրի միջոցով։ Առածներից հասկանալի յե, փոր փոտախտով հիվանդ փեթակների մեջ աննդատու մեղուների ստամոքսները միշտ պարունակում են իրանց մեջ փափստի սաղմիկներ և բացիներ։ Վերջինները, անցնելով փորդի աղիքային խողովակը, արագությամբ բազմանում են և պատճառ դառնում ձագի կորոյան։

Այն մեղվապահները, փորոնք անծանոթ են հիվանդության եռությանը, շատ հաճախ վոչ միայն վարակում են իրանց մեղվանոցները, այլ և մեղվապահական մեծ շրջաններ։ Այս յերեսութը նկատվում է այնպիսի վայրերում, ուր փեթակները փոխազրում են տեղից տեղ, կամ, ինչպես ասում են, մեղվարուծության մեջ ընդունված ե փեթակները չվեցնելու յեղանակը։

Մեղվապահները փոտախտով վարակում են մեղվանոցները գլխավորապես՝ 1) կերակրելով մեղուներին այնպիսի մեղրով, փոր հանած և փոտախտով հիվանդ ընտանիքներից, 2) փոխազրելով դատարկ հացեր, մեղր և փորդեր հիվանդ ընտանիքներից առողջների մեջ, 3) ուժեղացնելով թույլ ընտանիքները մեղուներով և ձագով, փորոնք առնված են վարակված փեթակներից, 4) նոր ձագեր դնելով այնպիսի հին փեթակների մեջ, ուր առաջ տեղափորված են յեղել հիվանդ ընտանիքներ։ 5) փեթակներն իրար մոտիկ զետեղելով, —մի հանգամանք, փորի պատճառով ջահել մեղուները, խմբական թոփչըների ժամանակ, հիվանդ ընտանիքնե-

Ենթած ձագի փոտախտ

(Ամերիկական փոտախտ)

1. Շատ և տարածված կովկասում և ավելի քիչ միջին թուսատանում։
2. Մեղունում և կնքված ձագը։
3. Սկզբում շոկոլագի և ապա բոված սուրճի գույն ունի։
4. Նույնը։
5. Մեղուները համարյա չեն մաքրում բջիջները։
6. Նեղված զանգվածը սաստիկ ձգվող է։
7. Թույլ հոտ հյուսնի սունձի կամ համարյա անհոտ։
8. Կոփքները պինդ ամրացրած են. մուգ-շագանակույն։
9. Համարյա յերբեք չի վարակում բոսի և մայրացու վորդերը։
10. Նեխված զանգվածը զետեղվում և բջիջի յերկարությամբ և կալչում և նրա կողմանակն պատին։
11. Bacillus larvae։
12. Չափաղանց վարակիչ է։

Պարկածել վորդ

1. Միջին թուսատանում ավելի լի տարածված, քան հարավում։
2. Վորդը մահանում և բջիջները ձածկելուց առաջ, ինչպես և կնքված ձագը։
3. Դեղնավուն։
4. Նույնը։
5. Մեղուները մաքրում են բջիջները։
6. Նեխված զանգվածը ջրալի յե և ամենաին ձգվող չե։
7. Առանց հոտի։
8. Կոփքները պինդ չեն ամրացրած։
9. Մեղուների վորդերն են մեղունում։
10. Վորդը յերկար ժամանակ կնճռու տեսք ունի. ձգված և բջիջի յերկարությամբ։ Հիվանդության բնորոշ նշանն այն է, փոր փորդի մարմնի արտաքին թաղանթը դժվարությամբ և պատուվում և այս պատճառով սատկած փորդը առանց վնասվածքներ կրելու, ասեղով հեշտությամբ դուրս և բաշվում բջիջից պարզի նման։
11. Հատուկ մանրե չե զանգված։
12. Վարակիչ է։

բից սխալմամբ մտնում են ուրիշ, առողջ փեթակներ. 6) փախչող ձագերը (քաղցից կամ անմայր լինելու պատճառով), վորոնք մտնում են ուրիշ փեթակների մեջ, նույնպես կարող են տեղափոխել հիվանդությունը. արհեստական մոմաթերթը՝ անկատար միջոցներով վատ պատրաստված մանր արդյունաբերողների գործարաններում այնպիսի մոմից, զոր ստացվածքե փտախտով վարակված հացերից. և վերջապես 8) հիվանդությունը կարող է հազորդվել գործիքների և մեղքապահի ձեռքերի միջոցով, վորոնք քիչ առաջ շփումն են ունեցել փտախտավոր ընտանիքների հետ:

ՓՏԱԽՏԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՋՂԵՐԻ ՄԵԶ

Կոճղերի (քյոթուկ), կթոցների և մանավանդ ռուսական ու
մալրոսիական կանգուն ծառաբների մեջ (ՇՏՈՅՔ) յերեան հանել
փտախտի այս կամ այն տեսակը շատ ավելի դժվար է, քան
զրջանակավոր փեթակների մեջ. բայց և այնպես շատ հաճախ,
մինչև անգամ գարնան սկզբներում, յերբ փեթակների մեջ շատ
քիչ ձագ կա, կարելի յէ ճանաչել հիվանդ ընտանիքները: Այդ
ժամանակ փտախտով վարակված փեթակների առաջնատախտակի
կամ կոճղերի հատակի վրա նկատվում են մուգ գույնի հատիկ-
ներ: Արտաքին տեսքով նրանք նման են մեղուների կղկղանքին,
խառնված ակնամոմի և հին հացի կտորների հետ: Այդ փոքրիկ
գնտակները սովորաբար կպչում են փեթակի տախտակին և նրանք
վոչ այլ ինչ են, յեթե վոչ փափախավոր թիջների չորացած պա-
րունակությունը, զոր մեղուները դուրս են գցել: Յեթև մեղվա-
պահն ունի մանրագիտակ և փոքր ինչ ծանոթ և փտախտի ման-
րեամարմիններին, այդ դեպքում նա՝ 650 անգամ մեծացնելով
հեշտությամբ կարող է գտնել հիշված գնտակների մեջ փտախտի
սաղմեր, յեթե հիրավի գնտակները փտախտային ծագումն ու-
նին*): Կասկածելի կոճղերում փափախտը յերեան հանելու համար
անհրաժեշտ և լինում փոքրիկ կտորներ կտրել այն հացերից, ուր
կնքված գորգերը ցրված դրությամբ են յերեւում և առաջ հետա-
զոտել կտորները: Մեռած ձագը լուցկու կամ գնդասեղի միջոցով
հետազոտելիս, վերեւում հիշված նշաններով դժվար չէ հենց ան-

*) Յեթե մեղվապահը դժվարանում և փորոշել զնդակների ծագումը, նա սկսոք և քիչ բանակությամբ հավաքե՞ նրանցից՝ ամեն մի փեթակից առանձին- առանձին, և համարազգելով՝ փորբեկ թղթայ ծրաբների մեջ ուղարկե (փակ նամակնով) տեղական մեղվապահական ընկերությանը կամ՝ մեղվապահության հրահանգին խնդրելով հետազոտել նրանց:

Ճամբ գործիւ, թե ինչ հիվանդությունից ե մեռել վորդը։ Յերբ
մեղքապահն այլ ևս չե կասկածում, թե գործ ունի փտախտի հետ,
պետք ե գարվի հետեւյալ կերպով։ Ամենից առաջ անպայման ան-
հրաժեշտ ե գարակված ընտանիքի մեջ դադարեցնել ձու դնելը։

Սրա համար հարկավոր ե գտնել մորը, փակել նրան վանդակի մեջ և պահել այստեղ 21 որ՝ մինչև զոր ամբողջ ձագը գուրս գա: Իսկ ընտանիքը պետք է նույն ժամանակվա ընթացքում ծուխ տալ և կերպարել թանձր շաքարաջրով՝ խառն Փորմալինի հետ, վորի 20% լուծվածքից 10-12 կաթիլ ածել շաքարաջրի մի բաժակի (թեյի) մեջ: Կոճղի հատակի վրա պետք է ժամանակ առ ժամանակ զնել շորի կտոր՝ թթված Փորմալին 10% լուծվածքի մեջ*): Յերբ հիվանդ ընտանիքի մեջ ամբողջ ձագը գուրս և յեկել մեղուներին փոխազրում են ուրիշ մաքուր փեթակ: Շատ լավ կը լինի յեթե այդ փեթակի մեջ զանվին պատրաստի մաքուր դատարկ հացեր: Հին մորը վերցնում են յեկ նրա փոխարեն տալիս են նոո, թեղմնավորված մայր, վոր հանված և առողջ ընտանիքի մեջ: Մեղուներին շաբանակում են յերեկոները, մաքուր փեթակի մեջ ծուխ տալ Փորմալինի գոլորշիով 10-12 որվա ընթացքում՝ որամեջ:

Յերբ մի անգամ մեղվանոցում փտախտ և յերեան յեկել, շատ քիչ և պատահնում, վոր լոկ մի փեթակ հիվանդացած լինի: Մանրազնին գիտողությունից հետո, համարյա, միշտ գտնվում են մի քանիսը: Այդ գեղգում ընտանիքների մի մասն անհապաղ պետք և փոխադրել մաքուր փեթակների մեջ՝ նախապես մի մուլթ տեղում պահելով նրանց յերեք որ և այդ ժամանակվա ընթացքում կերակրելով մեղուներին շաքարաջրով խառն փորմալինի հետ: Թույլ ընտանիքները միացնել և կազմել զորեղ ընտանիքներ: Հին մայրերի տեղ տալ նորերը և որամեջ ծուխ տալ փեթակները ֆորմալինով 10-12 որ: Այն կոճղերը, վորոնց մեջ ձագ կա և վորոնք մնացել են առանց մեղուների, փոխադրել և զետեղել ուրիշ փտախտով վարակված ընտանիքների տեղերում, իսկ այս վերջիններին փոխադրել ուրիշ տեղ: Այդ կոճղերում գտնվել մայրերին և փակել վանդակների մեջ: Թե մեկ թե մուս կոճղերը կերակրել ֆորմալինի հետ խառն շաքարաջրով և ամեն որ ծուխ տալ փորմալինի շողիներով 21 որից ընթացքում: 21 որից հետո

^{*)} Ֆորմալինի շուկայում ծախվամ և սովորաբար 40% լուծվածքով, սրանից 10% լուծվածք պատրաստելու համար՝ պես և չուր ավելացնել—մի բաժակ Փորմալինի վրա ածել յերկու բաժակ ջուր:

բոլոր ընտանիքները փոխազրել մաքուր կոճղերի մեջ՝ միացնելով թույլերին և հիվանդ մայրերի տեղ առողջներ տալով:

Կովկասյան ձեր կոճղ-փեթակների մեջ այդ բոլոր գործողությունների կատարումն այնպես դժվար չէ, ինչպես ուստական և մալորոսսիական կանոնած կոճղերում:

ՓՏԱԽՏԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ԾՐՁԱՆԱԿԱՎՈՐ ՓԵԹԱԿՆԵՐՈՒՄ

Երջանակավոր փեթակներում յերեան յեկած փտախտի բըժկության յեղանակը նույնն է, ինչ վոր կոճղ-փեթակներում: Տարբերությունը այս և միայն, վոր աշխատանքը վերջիններում ավելի շատ և ու դժվար՝ քան առաջիններում:

Յեթե փտախտը նկատվել ե այնպիսի շրջանակավոր փեթակում, ուր շատ ձագ կա, թե բաց և թե կնքված, ատենից առաջ նարկավոր և գտնել մորը և յեթե մեղրաբերք կա ու մեղվապահը յերկյուղ չունի մեղուների հարձակումից, պետք ե վոչչացնել մորը: Իսկ այնպիսի ժամանակ, յերբ բերք չկա, անհրաժեշտ և փակել մորը վանդակում (լավ և Տիտովի վանդակում): Յեթե մայրը փակված ե վոչ վանդակում, այլ դրվագ և խուփի տակ մեղրահացիք վրա, պիտք ե յերեմն նայել նրան, վորովհետև մեղուները հաճախ կրծում են հացերը և բաց թողնում մորը: Ապա նշաններ են առում վոչ միայն այն բոլոր շրջանակների վրա, վորոնց մեջ մեռած ձագ կա, այլ և այնպիսիների վրա, վորոնց մեջ նոր դրվագ ձվեր կամ, իսկ ընտանիքին ծուխ են տալիս ամեն որ՝ 21 որվա ընթացքում և կերակրում են փորմալինի հետ խառն շաքարաջրով (20 տոկոս լուծվածքի 10—12 կաթիլ, շաքարաջրի ամեն մի ըաժակի մեջ): Յերբ ձագն ամբողջովին դուրս կը գա, ընտանիքը փոխազրում են մաքուր փեթակի մեջ, ուր կան միայն դատարկ շրջանակներ՝ առանց հացերի և արհեստական մոմաթերթի: Մեղուներին 1—2 որ պահում են մութ, ծածկված տեղում, ապա դուրս են բերում փեթակը և զնում նախկին տեղը. բնի մեջ զետեղում են մաքուր շրջանակներ արհեստական մոմաթերթի ամբողջական թերթերով կամ հացերով և տալիս են նոր, առողջ մայր: Առաջին 7—10 որը կերակրում են փորմալինախառն շաքարաջրով և շարունակում են ծուխ տալ փորմալինով—որամեջ, մինչև վոր մեղուները կնքեն նոր ձագը: Նշան արած շրջանակների հացերը, վորոնց մեջ ձագ կար, պետք ե հալել, ինչպես նաև այն հացերը, վորոնց մեջ

մեղր կա: Մաքուր հացերը պետք ե լավ սրսկել ֆորմալինի 20 տոկոս լուծվածքով և մի քան որ պահել վորև դատարկ փեթակի մեջ ու ծուխ տալ փորմալինով: ապա կարելի յե այդ հացերը տալ բժշկված ընտանիքներին: Այն դեպում, յերբ այդպիսի հացերի թիվը շատ ե, կարելի յե ընկլմել նրանց փորմալինի 10 տոկոս լուծվածքով լի ամսնի մեջ և 20—25 բոլեյից հետո հանելով ամսնից՝ թափ տալ փորմալինը բջիջների միջից ու հացերը չորացնել: Իսկ յեթե հացերը հանված են փտախտով սաստիկ վարակված ընտանիքներից, իբրև նախազգուշություն, լավ ե հալել նրանց:

Յեթե շրջանակավոր փեթակներից կազմված մեղվանոցում յերեացել են փտախտով հիվանդ մի քանի ընտանիքներ, ամենից լավ և փոխադրել նրանց մաքուր փեթակների մեջ, նախապես մեղուներին պահելով ձագակաների կամ այլ արկդների մեջ յերկու որ-մութ տեղում: Այդ ընտանիքները պետք ե կերակրել փորմալինի հետ խառն շաբարաջրով: Ապա մեղուներին փոխադրում են մաքուր փեթակների մեջ զետեղելով նրանց մեջ նախապես այնպիսի շրջանակներ, վորոնց վերին ձողերին կպցրած և մոմաթերթի նեղ ժապավեններ, իսկ յերկու որից հետո մաքուր հացեր: Թույլ ընտանիքները միացնում են, տալիս են նրանց մի մեղրահաց և շարունակում են փորմալինով ծուխ տալ որամեջ՝ մինչեւ վորդերը ծածկվեն: Մայրերն այս ընտանիքների մեջ ևս պետք ե փոխարինվեն նորերով:

Հիվանդ ձագերով շրջանակները պետք ե բաժանել և զետեղել փտախտավոր ընտանիքների մեջ և սրանց փեթակներում ծուխները դադարեցնելու համար՝ պետք ե մայրերին կամ սպանել և կամ փակել վանդակների մեջ: այս ամենից հետո նրանց բժշկում են այնպես, ինչպես մեղվանոցում յերեցած մի հատիկ փտախտավորը ընտանիքը:

Յեթե փտախտը նկատվել ե գլխավոր մեղրաբերքից հետո՝ մեղր հանելու ժամանակ պետք ե վարվել հետեւալ կերպով: —Հիվանդ ընտանիքներին փորմալինի շոգիներով ծուխ են տալիս այնքան ժամանակ, մինչև վոր մայրը բոլորովին դադարեցնե ծուխները, ապա մեղուներին փոխադրում են մաքուր փեթակի մեջ: առողջ ընտանիքներից վերցնելով՝ տալիս են նրանց ձմեռելու համար՝ սերեկած մեղրի անհրաժեշտ քանակությամբ լի շրջանակներ և այս դրությամբ ընտանիքները ձմեռում են: Մինչև ճանճարան դնելը (տուն տանելը)՝ այդպիսի ընտանիքներին ժամանակ առ ժամանակ պետք և ծուխ տալ փորմալինով (6—8 անգամ) կամ փեթակների հա-

տակի վրա զնել փոքրիկ, ձեռքի ափի չափ, շորի կտորներ՝ թըրջված փորմալինի $10^{\circ}/_0$ լուծվածքով։ Բժշկությունն այս յեղանակով հաջողվում է այն դեպքում, յերբ հիվանդ ընտանիքները փոխազդում են մաքուր, ձմեռելու համար լիսին նախապատճառաւոված ըների մեջ և մայրը նոր վեթակում աշնան ժամանակ այլ իս ձու չեղում։ Գարնանն այդ ընտանիքները պետք է կերակրել փորմալինի հետ խառն շաքարաջրով, առաջին շաքարթվալնեցքամ ծուխ տալ ամեն որ և ապա յերկու շաքարթ՝ որամեջ։

ՓՏԱԽՏԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՄՐ՝ ԶԱԳԻ ՎՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

Փտախտի բժշկությունն այս յեղանակով մինչեւ այժմ դործ է ածվում մեղվապահական մի քանի շրջաններում։ Եա կատարվում է հետեւալ կերպով։ Յերեկոյան, յերբ մեղուները դադարում են գնալ-գալուց, մոր հետ միասին թափ են տալիք նրանց պահեստի դատարկ փեթակի մեջ, վոր և զետեղում են մութ նկուղի մեջ և այնտեղ պահում մեկ-յերկու որ՝ նայելով թե վորքան հաջող և կատարվել վարակված հացերից մեղուներին թափ տալը։ Այն դեպքում, յերբ հաջողվում է արագությամբ թափ տալ մեղուներին հացերից և յերբ նրանք ժամանակ չեն դանում մեղր ծծելու, հետեւալ որը յերեկոյան նրանց կրկին փոխազրում են նախկին փեթակի մեջ, վոր պետք է վաղորոք լավ ախտահանված լինի։ Առանց մեղուների և հիվանդ ձագով մնացած փեթակը դրվում է մի ծածկված տեղ մինչեւ հետեւալ որը։ Առավոտյան այս փեթակի ըոլոր հացերը թե բաց և թե կնքված ձագի հետ միասին, այրվում են։ Նոր և թափանցիկ (բաց գույնի) հացերը յերեք անգամ ծուխ են տալիք ծծումբով և փորմալինով։ Փոխադրած մեղուներին կերակրում են շաքարաջրով՝ խառն փորմալինի հետ։ Առաջին շաքարթ՝ մեղուներին ծուխ են տալիք ամեն որ և ապա յերեք շաքար շարունակ՝ որամեջ։ Բժշկության այս յեղանակը խորհուրդ է տալիք գործադրել ի. ի. կորաբեկը։ Անկարելի յե այդ յեղանակը նպաստականարմար համարել, փորովհետ մեծ քանակությամբ կնքված փորդի—յերեմին 6—8 շրջանակ—վոչնչացնումը պատճառ է դառնում ընտանիքների չափազանց թուանալուն։

Ծայրայեղ դեպքում այս յեղանակով կարելի յե բժշկել հինգ ձերակներից կազմված մեղվանոցը, որը սովորական բժշկությունը մեծ դժվարությունների և հանդիպում։

ՓՏԱԽՏԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՄՐՁՆԱՅԻՆ ԹՐՎԱԿՈՒՏՈՎ

Մրջնային թթվուտը, վորպես բժշկության միջոց փտախտի գեմ, պիտք և համարել փորմալինից հետո ամենաոգտակարը։ Շատ մեղվապահական ինչպես ոռւս, այնպես ել ոտարյերկրացի, շատ հաջող մաքառում են այս ախտի դիմ մրջնային թթվուտի միջոցով։ Նրա ներգործությունը փտախտի մանրեամարմինների և մանավանդ նրանց սաղմերի վրա, ինչպես ցույց տվին հետազոտությունները, շատ ավելի թույլ ե, քան փորմալինի շոգիներինը, այնուամենայնիվ կատարելով այն ամենը, ինչ վոր գործ է գրվում հիվանդությունը փորմալինով բշկելու ժամանակ, փտախտը բժշկություն և մրջնային թթվուտի միջոցով։

Բժշկությունը մրջնային թթվուտով վոչ միայն ավելի սակավ վստահելի յե, այլ և ավելի թանկ։ Փտախտը մրջնային թթվուտով բժշկելու համար անհրաժեշտ է։

1) Դադարեցնել մոր ձու ղնելը հիվանդ փեթակի մեջ և այդ նպատակով փակել մորը վանդակի մեջ 21 որ։

2) Կերակրել մեղուներին շաքարաջրով, վորի $1\frac{1}{2}$ շշ մեջ ածել հացի մի գդալ թթվուտի $10^{\circ}/_0$ լուծվածք։

3) Փեթակի հատակին ղնել մի սրվակը, ածել մեջը 100 գրամմ (մոտ 24 մսխալ) մրջնային թթվուտի $10^{\circ}/_0$ լուծվածք և կապել բերանը մետաղյա ցանցով։ Լավ և ածել այս լուծվածքի մեջ նաև 15—20 կաթիլ գինու սպիրտ։ Նույն լուծվածքը, նույն քանակությամբ կարելի յե ածել յերկու դատարկ հացերի մեջ և ղնել բնի մեջ մեկը՝ մեկ կողքին, մյուսը՝ մյուս կողքին։ 10 որից նետ հարկ և լինում նորից թթվուտ ավելացնել ամաններում, մասնավանդ, յեթե նա ածած եր դատարկ հացերի մեջ։

4) 21 որից հետո, յերբ բոլոր ձագերն արդեն դուրս յեկած են լինում, մեղուներին փոխադրում են մի այլ մաքուր փեթակ, վորի շրջանակների մեջ ամրացրած են մոմաթերթի նեղ ժապավեններ, և փեթակը յերկու որպէս դնում են մութ տեղ։ Արկանոցը ցանցապատվում է և փեթակի մեջ դրվում է շաքարաջրով՝ խառն մրջնային թթվուտի հետ։

5) Ախտահանում են այն զետինը, որը գտնվում էր վարակված փեթակը։

6) Յերկու որից հետո մեղուներին դուրս են բերում և ղնում նախկին տեղը, տալիս են նրանց մաքուր հացեր, վարուցից մեկի

մեջ պետք և լցված լինի 100 գրամմ սրջնային թթվուտի 10%/₀ լուծվածք և մի շրջանակ մեղք՝ հատկապես առողջ ընտանիքից:

7) Հին մորը վոչնչացնում են և տալիս են նոր ու առողջ մայր՝ վանդակի մեջ փակած, ուր նրան պահում են յերեք որ՝ մեղուների փախուստից խուսափելու համար, մի յերեսույթ, վոր յերեթմանապես պատահում է և առանձնապես այն ժամանակ, յերբ ընտանիքը չունի շինած հացեր ու վորդեր, իսկ մեղուները տրամադիր չեն շինելու վոչ միայն մոմաթերթի նեղ շերտերն, այլ և նրա ամրողջ թերթերը:

8) Առաջին 5—8 որը տալ մեղուներին գիշերվա համար շաքարաջուր՝ խառն մրջնային թթվուտի հետ:

9) Կնքված ձագեր յերեալիս՝ ժամանակ առ ժամանակ ուշադրությամբ զննել նրանց և յեթե նրանց մեջ այլ ևս չեն նկատվի փախախից մեռած վորդեր, ընտանիքը կարելի յե համարել բժշկված: Հակառակ դեպքում բժշկությունը պետք ե սկսել նորից:

Վորպես նախազգուշական բժշկություն, պետք ե գործադրել հետեւյալ միջոցները.—

ա) Կերակրել ամբողջ մեղվանոցի մեղուներին շաքարաջրով՝ խառնած մրջնային թթվուտի 10%/₀ լուծվածքի հետ*):

բ) Նույն թթվուտն ամանով դնել փեթակի հատակի վրա՝ յուրաքանչյուր ամանի մեջ ածելով 100 գրամմի շափ:

ՊԱՅՔԱՐԸ ՓՏԱԽՏԻ ԴԵՄ ՄԵՂՎԱՆՈՑՆԵՐՈՒՄ, ՈՒՐ ՎԱՐԱԿՎԱԾ ԵՆ ՄԵԾ ՖԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԸՆՏԱՆԻՒՄՆԵՐ

Պայքարը փախախի դեմ մեծ մեղվանոցներում, ուր յերեալել են մեծ քանակությամբ վարակված ընտանիքներ, ինչպես ցույց տվին Անդրկովկասում և Սեմբրեշենսկի շրջանում սովորական գործնական մեղվալահների կատարած բժշկության փորձերը վերջին տարիների ընթացքում, տալիս ե շատ միիթարական հետևանքներ, վորոնք ապացուցանում են, թե ամեն տեղ հնարավոր ե հաջողությամբ պայքարել այդ վարակիչ հիվանդության դեմ:

*) Ծանոթություն: Խուկայում մրջնային թթվուտը սովորաբար վաճառվում է իրու 25%/₀ լուծվածք, վորը 10%/₀ լուծվածք դարձնելու համար՝ պետք է թթվուտի յուրաքանչյուր յերկու գուալի վրա ավելացնել յերեր գուալ:

ՊԱՅՔԱՐԸ ՓՏԱԽՏԻ ԴԵՄ ԳԱՐԱԱՆ ՍԿԶԲԻՆ

Փտախալը յերեան և զալիս գարնան սկզբին, յերբ փեթակների մեջ շատ ձագ կա և յերբ մեղուները անկարող են արագությամբ շինել արգեստական մոմաթերթեր, մոր առանձնացումը մայրավանդակի մեջ 21-րդ որը կամ նրա վոչնչացումը՝ ձու դընելը գաղարեցնելու նպատակով, ինչպես անվում է այդ բանը այնպիսի դեպքերում, յերբ փեթակը լին և զանազան հասակի ձագերով, վոչ մի միտք չունի և բոլորովին աննպատակ է: Սույնանման դեպքերում ավելի նպատակահարմար է միջակ ուժի ընտանիքները փոխադրել մաքուր փեթակների մեջ գատարկ, առանց մոմաթերթի շրջանակների վրա, կերակրել մեղուներին շաքարաջրով՝ խառն փորմալինի հետ և մի որից հետո տալ այդ ընտանիքներին լավ ախտահանած մոմանացեր:

Մոմանացերը ամենից լավ ե ախտահանել՝ ընկղմելով նրանց մի վեղոյի մեջ, ուր լցրած և 10%/₀ փորմալինի լուծվածք, 20-25 լովելից հետո հանել շրջանակները վեղոյից, թափ տալ բջիջների միջից փորմալինի լուծվածքը. չորացնել մոմանացերը և ապա տալ մեղուներին: Այս նպատակով գործադրվող մոմանացերը պետք է լինեն մաքուր և յեթե նրանք վերցրած են հիվանդ ընտանիքներից, համեստ դեպքում պարագանակին իրանց բջիջների մեջ չորացած փախախին թեփուկներ:

Ողտակար և փոխադրած ընտանիքներին առաջին յերկու շաբաթվա ընթացքում ծուխ տալ փորմալինով և առանձնապես ցանկալի յե այդ գործողությունը կատարել մեծ քանակությամբ ձագերի յերեան գալու շրջանում:

Քարնան ժամանանակ փոխադրած միջին ուժի ընտանիքները, սովորական նորմալ պայմաններում, զլիսավոր մեղրաբերքի ժամանակամիջոցը մերձենալիս, ընդհանրապես, լավ ուժեղանում էն և արդյունք տալիս տիրոջը:

Բոլոր թույլ ընտանիքները միացնվում են և ապա բժշկությամբ նրանց միշտ նույն յեղանակով, ինչպես միջակ ուժի ընտանիքները:

Այս դեպքերում, յերբ մաքուր փեթակների մեջ փոխադրած ընտանիքներից կը հավաքին 10-12 հատ իրանց մեջ ձագերի բավականաչափ քանակություն պարունակող շրջանակներ, վորոնց մեջ կան բիչ քանակությամբ մահացած վորդեր, և յեթե զլիսավոր մեղրաբերքից առաջ այդ ձագերից կարող ե կազմվել նորմալ

ընտանիք, ապա այդ ձագեր պարունակող շրջանակները չեն վա-
չունացվում, այլ զետեղվում են դատարկ փեթակների մեջ, վորոնք
և դրվում են ուժեղ ընտանիքների տեղերում։ Այս յեղանակով
կազմված ընտանիքներին ամեն որ ծուխ են տալիս փորմալինով
և 18-21 որից հետո փոխադրում մի որով դատարկ փեթակների
մեջ և ապա տալիս են նրանց արվեստական մոմաթերթեր, վորը
և մեղուները սովորաբար լավ շինում են այդ ժամանակ։

Գլխավոր մեղրաբերքի մերձենալիս՝ կատարվում է մանրա-
զնին քննություն փոխադրված փեթակների մեջ և այն զեղքե-
րում, յերբ յերեան և գալիս հիվանդության կրկնություն (բեցե-
դիվ), ուժեղ ընտանիքները փոխադրվում են մաքուր փեթակնե-
րի մեջ, որ նրանց տալիս են արվեստական մոմաթերթերով շրջ-
անակներ, և պարտավորապես փոխադրում մայրերին, իսկ պա-
հատի մայրեր գժվար չեն ունենալ մեծ մեղվանոցներում այդ ժա-
մանակամիջոցում։

Հիվանդության կրկնությունները, սովորաբար, 3-4⁰/₀-ից ա-
վելի չեն լինում։

Փտախտի գեմ պայքարելու հիշված յեղանակը գործադրելիսու-
թույլ ընտանիքների միացման պատճառով, մեղվանոցում փե-
թակների թիվը սաստիկ կրծատվում է։ Մեղվանոցի փեթակների
սահմանած թիվը պահպանելու համար պետք է հոգալ վաղանաս
պարսեր ստանալու մասին այն ընտանիքներից, վորոնք գարնա-
յին առաջին քննության ժամանակ դուրս են յեկել առողջ։

Սիստեմատիկ շահագիտական (ապեկուլյատիվ) կերպման
միջոցով այդպիսի ընտանիքներից ստացվում են պարսեր, վորոն-
ցով մեղվապահը լրացնում է իր մեղվանոցի ընտանիքների սահ-
մանված թիվը։

Գարնային պայքարի հիշված յեղանակը ամենից հաճախ
գործադրվում է չկնքված ձագերի կամ «յեկորոպական» փտախտի
բժշկության ժամանակ։ Ինչպես հայտնի յեր, հիվանդության այդ
տեսակը, սովորաբար յերեան և գալիս այն ժամանակ, յերբ փե-
թակների մեջ դեռ ես քիչ ձագ կա։

ՊԱՅՄԱՐԸ ՓՏԱԽՏԻ ԴԵՄ ԱՄՍՈՎԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱ- ՆՈՒՄ

Ամառային ժամանակաշրջանում կամ գլխավոր մեղրաբեր-
քից անմիջապես առաջ, յեթե հիվանդությունը յերկար ժամանակ

չե մնացել առանց բժշկության, հիվանդ ընտանիքներում շատ հա-
ճախ լինում են 8-10 շրջանակներ կնքած ձագերով։ Այդ գեղքե-
րում սատկած ձագեր յուրաքանչյուր շրջանակի վրա պատահում
են քիչ քանակությամբ։ Մեծ մեղվանոցներում, ուր վարակված
ընտանիքները բաղմաթիվ են, հաճախ հավաքվում են մի քանի
հարյուր շրջանակ, համարյա ամբողջովին լցված ամեն հասակի և
գլխավորապես կնքված ձագերով, վորոնցից 8-10 որ հետո պետք
է գուրս գան հարյուր հազարավոր ջահել մեղուներ։ Այդ մեղու-
ների վոչնչացումը համահավասար է մեղվանոցում մի քանի տաս-
նյակ ընտանիքների վոչնչացման։ Բացի սրանից այդ մեղուները
չափազանց գնահատելի յեն մեղվանոցում, վորովհետև նրանք ան-
կազմած ոժութած են դիմադրական ոժերով հիվանդությունների
վեմ։ Այլ խոսքով՝ նրանք ստացել են իմմունիտետ վարակման դեմ։

Յերբ մերձենում է ընտանիքներում մեծ քանակությամբ կըն-
քված ձագեր յերեալու ժամանակը, նկատվում է նաև այսպիս
անվանված «ամերիկական փտախտի» կամ կնքած ձագերի փր-
տախտի յերեալը, վորի բժշկության լավագույն յեղանակը, յերբ
վարակված են շատ ընտանիքները՝ հետեւյալն է։

1) Բավականաչափ գորել ընտանիքները ավելի լավ և փո-
խադրել դատարկ փեթակների մեջ, վորոնց շրջանակները մոմած
են մոմաթերթի նեղ շերտերով։ Յերկու որից հետո այդ շրջանակ-
ները հեռացնվում են և փոխարինվում նորերով, նրանք մոմած են
մոմաթերթի ամբողջական թերթերով։

Այսպիսի ընտանիքները, յեթե փոխադրված են մեկ կամ
մեկուկես շաբաթ գլխավոր մեղրաբերքից առաջ, լավ շինում,
սարքում են իրանց բունը և պահպանվում իրանց մեղքի ձմեռային
պաշարով, իսկ ավելի բարենպաստ պայմաններում՝ տալիս են
նաև արդյունք մեղվապահին։

2) Փոխադրված ընտանիքներից վերցրած ձագերով շրջա-
նակները զետեղվում են դատարկ փեթակների մեջ և նույնիսկ
նրանցով լցնում են շտեմարանները (մագազինները), վորի համար
և դադանի փեթակների բների վրա դնում են յերկ-յերկու շտե-
մարան։ Այսպիս վոր մի փեթակի մեջ կարելի յերեղավո-
ւու 20-24 շրջանակ ձագերով։ Այս փեթակները դրվում են ու-
րիշ նույնիսկ միջակ ընտանիքների տեղերում, իսկ վերջին-
ները փոխադրվում են այլ տեղեր։ Այսպիսի ընտանիքները հա-
նում են պտկամայրեր (ԵՎԱՊՕՎԱ մատք)։ Յերբ այդ փեթակնե-
րում դուրս կը գան բոլոր ձագերը, նրանք դառնում են շատ զո-

բեղ ընտանիքներ, վորոնք 20-21 որից հետո, և յերբեմն նույնիսկ վաղ՝ փոխադրվում են գատարկ փեթակների մեջ այնպեսի շրջանակներով, վորոնք մոմած են մոմաթերթի շերտիկներով, և ապա յերկու որից հետո, նրանց տրվում են կարենր բանակությամբ շրջանակներ ամբողջական մոմաթերթերով, վորը այդ շատ դորեղ ընտանիքները արագությամբ շինուամբերջացնում են։ Ժամանակին նրանց վրա դրվում են շտեմարաններ՝ պատրաստի մոմաճերով, վորոնք յերբեմնապես բարեհաջող տարիներում, յերկու անգամ հանգում և թափում են ծորեղ մեքենաներում։

Դատարկ բները, վորոնք մնացել են մեղուների փոխադրությունից հետո, պարունակում են իրանց մեջ մոտ մի փութ, յերբեմն և ավելի մեղք, վոր հանգում և թափում են մեքենայով, իսկ փոտախտով վարակված մոմաճերը հալում են մոմ ստանալու համար։

Փորձը ցույց է տվել, վոր վարակված ընտանիքները՝ կազմած ձագերով լի հավաքածու շրջանակներին տալիս են անհամեմատ ավելի լավ հետևանքներ, յեթե նրանց ամեն որ ծուխ են տալիս փորմալինով։

Փորմալինի բարենպաստ ներգործությունը առանձնապես յերեան և գալիս այն ընտանիքներում, վորոնց մեջ կան մեծ քանակությամբ նորածին չծածկված վորեր և սրանք, շնորհիվ փորմալինի ծխի, այլևս չեն մահանում և համարյա բոլորը դառնում են առողջ մեղուներ։

Սիստեմատիկաբար ծուխ տալուց հետո ընտանիքների առողջացումը, յերբ ձագերը կնքելու միջոցին մեղվապահն այլևս չի գտնում փոտախտով վարակված թիֆչներ այնքան ակներեւ լինում, վոր մեղվապահներից վորոնք հարկ չեն համարում այդ տեսակ ընտանիքները փոխադրել մաքուր փեթակների մեջ՝ մաքուր մոմաճերի կամ մոմաթերթերի վրա և այս բանը, իհարեւ մեծ սիալ եւ Շատ մեղվապահների դառն փորձերը ցույց են տվել, վոր առանց մեղուների փոխադրության, լոկ միայն ծուխ տալով, մանավանդ «ամերիկական փոտախտը» բժշկելիս հիվանդության կրկնությունները անխուսափելի յեն։

«Ամերիկական փոտախտի» դեմ պայցբարելիս՝ մեղվանոցի փեթակների թիվը լրացնելու համար պետք է գործադրել ընտանիքների շահագիտական կերակրման վերոհիշյալ յեղանակը և հատկապես այն ընտանիքների վերաբերմար, վորոնց մեջ դարձնանալին քննության ժամանակակի հիվանդություն չի դանդիւ։

3) Այն գեպքերում, յերբ ընտանիքներից մի քանիսի մեջ կառաջանա հիվանդության կրկնություն, յերբ հույս չի մնա, վոր նրանք հնարավորություն կունենան ապահովելու իրանց ձմրան պաշարով կամ այլ խոսքով՝ մեղրաբերքի վերջում, և յեթե այդ ընտանիքները ուժեղ կը լինեն ու կունենան փորոշյալ արժեքը, նրանց հետ պետք է վարգել այնպես, ինչպես վոր ցույց է տված նրանց հետ պետք է վարգել այնպես, ինչպես վոր ցույց է տված դատախտի բժշկությունը շրջանակավոր փեթակներում» գլխի մեջ։

Պայցբարը փոտախտի դեմ մեծ մեղվանոցներում, ուր կան բազմաթիվ վարակված ընտանիքներ, յեթե այդ պայցբարը կիրառվում և կանոնավորապես՝ թույլ ընտանիքները իրար հետ միացնելով, սովորական միջակ բերքի տարիներում վոչ միայն ծածկութիւնի սովորական մեղվապահներին լավ արդյունք ստանալու վայրի մեղվանոցներից։ Յերբ բժշկությունը կատարվում և կարանց մեղվանոցներից։ Յերբ բժշկությունը կատարվել աղատավել հաջողվում և, սովորաբար, մեղվապահական յերկու սեղոնի ընթացքում։

ՓՏԱԽՏԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՎԱՊԱՀԱԿԱՆ ԾՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Վորբան և պարզ է փոտախտի բժշկության վերաբերմար իմ այս հանձնարարած յեղանակը, այնուամենայնիվ նույն իսկ հմուտ մեղվապահները շատ անգամ ճշտությամբ չեն հետևում այն ցուցումներին և պահանջներին, վորոնց անշեղ կատարումը միայն կարող է ապահովել հիվանդության վեմ ճեռարկված մաքառման հաջողությունը։ Մեղվապահներից շատերը իսպառ փոփոխելով բժշկության ձևը, որինակ, բավականանալով միայն հիվանդ ընտանիքներին փորմալինի ծուխ տալով, առանց դադարեցնելու մոր ձու զնելը կամ մեղվապահնելով դատարկ ու մեղրաբից հացերը հիվանդ ընտանիքներից մաքուր փեթակների մեջ և այլն, — անկեղծ կերպով համոզված են, թե ուղիղ են բժշկում։

Վերջին յերկու տարվա ընթացքում Անդրկովկասում կազմակերպվեցին մեղուների ընդհանրական բժշկության փորձեր առանձին մեղվանոց-հիվանդանոցներում։ Մաքառումը վարակի դեմ այնքան հաջող եր ընթանում, վոր սկզբում բժշկությանն անվտանությամբ վերաբերվող մեղվապահները սեղոնի վերջում իրանը ելին ինդը նորից հաղմակերպել նույնանման բժշկություն։ Ըսդհանրական բժշկությունը կատարվում է հետեւյալ ծրագրով։

Մեղվապահական այն շրջանում, ուր ակնհայտնի կերպով սաստիկ տարածված է փտախտը. հրահանգիչը ժողովի յե հրավիրում տեղական մեղվապահներին և նրանց հետ զրոյց և անում փտախտի մասին: Ապա ներկա մեղվապահներից ընտրվում է մի մասնակումք:

Մասնախմբի պարտավորություններն են՝ ընդհանուր հըսկողություն բժշկության վրա, վերաստուգություն կատարած աշխատանքների, տեղի ընտրություն մեղվանոց-հիվանդանոցի համար, ուր պետք է բժշկին ընտանիքները, և միջնորդի դեր բժշկության աշխատանքը կատարողի ու մեղվատերերի մեջ, յեթե նրանց մեջ ծագին թյուրիմացություններ:

Բժշկության աշխատանքի կատարողն ընտրվում է տեղական մեղվապահներից՝ ճայների բազմությամբ. վարձատրության քառակը աշխատանքի համար վորոշում է մասնախումբը, վոր և գըտնում է դրա համար անհրաժեշտ միջոցները: Անդրկովկասում աշխատանքներ կատարողին վարձատրելու գումարը հավաքվում եր մեղվապահներից՝ նրանց հոժարակամ հանձնառությամբ հոգալու բժշկության ծախքերը:

Աշխատանքը կատարողին տրվում են բժշկության համար անհրաժեշտ նյութեղենը և գործիքներ՝ համապատասխան հրահանգներով բժշկության յեղանակի մասին:

Բժշկության վերջանալուց հետո մասնախումբը, հրահանգների և աշխատանք կատարողի հետ միասին, նայում է մեղվանոց-հիվանդանոցն և այդ ժամանակ պարզվում են բժշկության հետեւանքները: Բժշկված ընտանիքները հանձնվում են տերերին:

Յերկամյա փորձն Անդրկովկասում ցույց տվեց, վոր մեղվապահական խոշոր շրջաններում մեղվանոց-հիվանդանոցների կազմակերպությունն անհրաժեշտ է: Այդպիսի մեղվանոցները սարքվում են արդյունաբերական մեղվանոցներից հեռու: Այստեղ բերվում են բուժություն հիվանդ ընտանիքները վորոշ շրջանի մերձակա տեղերից և յենթարկվում բժշկության յեղանակին:

Յեթե այսպիսի մեղվանոց-հիվանդանոցները կանոնավոր են կազմակերպված և գտնվում են փորձառու մեղվապահի ձեռքում, կարելի յե հուսալ, վոր շատ շրջաններում նրանցից ստացած արդյունքը վոչ միայն կը ծածկե դեղերի ծախքը, այլ և բժշկության դեկարտի վարձատրությունը, վոր Անդրկովկասում վորոշվել է ամսական 45 բուրլու չափ:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ ՓՏԱԽՏԻ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՅԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԵՄ

Նախազգուշության միջոցները փտախտի դեմ նույնն են, ինչ վոր գործ են զրվում բժշկության ժամանակ:

Մի քանի տասնյակ միջոցները, ինչպես որինակ նավթալինը, կուպրը, եվկալիպտը, կարբովյան թթվուտը և ուրիշները, վորոնց վրա մասնացույց են անում մեղվապահները, միմիայն սաստիկ անհանգատություն են պատճառում մեղուներին և համարյա բուրովին անզոր են արգելելու վարակման տարածումը: Յեթե մեղվանոցում զտնվել է փտախտով հիվանդ նույնիսկ մի փեթակ, անպայ ման անհրաժեշտ է, իրեն նախազգուշական միջոց, բժշկել ամբողջ մեղվանոցը, այսինքն՝ ժամանակ առ ժամանակ ծովս տալ փեթակները փորմալինի շոգիներով արկանոցներից կամ, յեթե փեթակների հատակները շարժական են, յետին կողմից: Բացի սրանից զարնանը պետք է բժշկական կերակուր տալ մեղուներին—շաբարաջուր, վորի հետ խառնած լինի փորմալին (յուրաքանչյուր 10—12 կաթիլ 20% փորմալինի լուծվածք): Վորպես բժշկական կերակուր կատարելապես պիտանի յե մըջնային թթվուտը, վոր գործ և ածվում իրեն 10% լուծվածք և այս լուծվածքի մի զըդալը (հացի) ածվում և մեկ ու կես շիշ շաբարաջրի մեջ: Այն մեղվանոցներում, ուր մեղուներին ջուր և արգում առանձին ջրամաններով կամ տակառներով, շատ ողտակար և խառնել ջրի հետ և փորմալին (20% Փորմալինի լուծվածքի 20 կաթիլ ամեն մի բաժակ ջրի մեջ): Մեղուները հառությամբ տանում են այդ ջուրը, վոր գործ և ածվում զլիխավորապես ջըրի կացնելու համար այն կերակուրը, վորով սննդառում-մեղուները սնուցանում են ծագերին:

Շատ մեղվապահներ թագնում են փտախտի գորությունն իրանց մեղվանոցներում և այս պատճառով հարկան մեղվապահները վոչ մի նախազգուշական միջոց չեն գործադրում վարակման դեմ մաքանելու համար, և այս դեպքում փտախտը տարածվում է վոչ միայն մերձակա մեղվանոցներում, այլ և վարակում և մեղվապահական ամբողջ շրջանը: Հաջող մաքառումը հիվանդության դեմ հարավոր և միայն այն դեպքում, յերբ բուլոր մեղվապահները ձեռք-ձեռք պետք տված, իբրև մի անձնավորություն, կը սկսեն գործել վարակմանն արգելը դնելու նպատակով:

ՖՈՐՄԱԼԻՆԻ ՇՈԳԻՆԵՐՈՎ ՄԵՂՈՒՆԵՐԻՆ ՇՈՒԽ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Մեղուներին ծուխ տալու համար անհրաժեշտ գործիքներից ամենահասարակները և եֆանազինները Ստուդիտսկու և Բալյասովի փոքրիկ ինքնայեններն են. (առաջինն արժե 85 կոպ., յերկրորդը՝ 1 ռուբլի): Ստուդիտսկու ինքնայենը ջրամանի նման մի անոթ է, փորի մեջ հազցրած և խողովակ ածուխի համար և տակից ունի գոլորշու անցքեր: Փորմալինի լուծվածքն ածվում և կողի անցքից, վոր ապա փակվում և մետաղյա պտուտակավոր ծածկույթով: Ինքնայենը տաքացնվում և այնպես, ինչպես և ամեն մի ինքնայեն՝ տաշեղով և ածուխով: 10 րոպեյից հետո սկսում են շոգիներ բարձրանալ խողովակից, վորի ծայրին ցանց և շինած*):

Ծուխ տալուց հետո ածուխի խողովակը փակում են խուփով և փորմալինի գոլորշիացումը գագարում և Բալյասովի ինքնայենը կազմված և համարյա նույն կերպ, ինչպես և Ստուդիտսկու ինքնայենը, բայց նրա մեջ փորոշ հարմարություն և սարքված փորմալինի բլթակներով (լուսակ) ծուխ տալու համար: Բժշկությունը այս բլթակներով շատ ավելի եժան և նատում, քան հեղուկ փորմալինի միջոցով**): Դիքախտաբար շատ հաճախ փորմալինի բլթակները լինում են հին, յերկար ժամանակ պահպած և այդ գեպքում նրանք բոլորովին անպեսք են գործածության համար: Ստուդիտսկու ինքնայենի մեծության պատճառով մեծ քանակությամբ փորմալին գոլորշիանում և բոլորովին ապարագուն: Բալյասովի ինքնայենի մեջ՝ փորմալինի բլթակների գործաթյամբ՝ այդ պակասությունը ուղղված է:


Բալյասովի ինքնայենի մեջ այն խողովակը, վորի միջոցով դուրս և գալիս շոգին, ամուր հազցնում են մի ուրիշ փոքր խողովակի վրա, վորի տրամագիծը կես վերշող և և բարձրությունը մեկ վերշող: Այս վերջին փոքր խողովակն անշարժ կպցրած և ինքնայենի վերին մակերեսույթին: Նա իր տակ ունի մետաղյա խիտ ցանց (Γ), վոր ծածկում և ինքնայենի ջրամբարի հետ միացած անցքը: Ցանցի վրա դրված և փորմալինի բլթակը: Յերբ ինքնայ-

*) Ծանոթություն: Ավելի գործնական և հարմար և Ախողովակը փոխարինել ուստի խողովակով:

**) Ծանոթություն: Փորմալինի մի հատ բլթակը բավական է 25—30 ընտանիքներին ծուխ տալու համար: Մի բլթակն արժե մի կոպեկ:

յեռյեփ և գալիս, ջրային գոլորշին ցանցի միջով անցնում և գեպի կարճ խողովակը, համակում և բլթակին և ապա մտնում յերկար խողովակի մեջ: Փորմալինի ինքնայենները կատարելապես կը ծառայեն իրանց նպատակին, յեթե ուղղվեյին նրանց հետեւյալ պակասությունները: Այս մետաղյա խողովակը, վորի միջով դուրս և գալիս փորմալինի շոգին, պետք և փոխարինվի ուստինի ձկուն խողովակով: առանց այդպիսի հարմարության անկարելի յե ծուխ տալ փեթակն արկանոցից և մեծ դժվարությամբ՝ հետին կողմից, նույն իսկ այն դեպքում, յերբ հատակը հանովի և: Կամենալով եժան նստեցնել՝ ինքնայենները շինում են բարակ թիթեղից և այս պատճառով կրակարանը և նրա խողովակը շուտով այրվում, փշանում են: Բացի սրանից փորմալինն ազդում և թիթեղի վրա և ըիչ ժամանակից հետո ինքնայենները բոլորովին անպետքանում են: Այս պակասություններից խուսափելու համար ինքնայենները պետք և շինվին կլայեկած պղնձից: Բայց այդ գեպքում նրանց դին ել կը բարձրանա ու կը հասնի 5—6 ռուբլու: Այս փողով կարելի յե շինել զեղեցիկ լամպա՝ առանց վերոհիշյալ պակասությունների: Բացի Բալյասովի ինքնայենից՝ ծախսվում են ան նրա լամպը:

Բալյասովի լամպը, վոր գործ և ածվում այս նույն նպատակով, իր կազմությամբ փորոշ հարմարություններ կունենար, յեթե նրա մեջ անվեյին մի քանի դյուրին փոփոխություններ: Բայց լամպի համարը՝ թույլ տալով մեղվապահական արհեստանոցներին շինել նրա բարակ թիթեղից, հենց դրանով դարձրել է



Նկար 11.

Արթիստների լամպը

Նրան համարյա անսպետք՝ գործածության համար։ Այն բոլոր անձինք, վորոնք աշխատել են Բալլասովի լամպով, զանգատվում են, վոր նա սաստիկ տարանում ե և տուշտցած տաքությունից լամպի շատ մասերը քանդվում, բաժանվում են իրարից։ Բացի սրանից կաթսան լավ չե նստում իր տեղում և աշխատանքի ժամանակ վայր սովորով՝ հանգինում ե սպիրտի լամպն և այլն։ Են կատի առնելով այս ամենը՝ գործածության չի կարելի հանձնարարել Բալլասովի լամպը, դունե այն կազմությամբ, վորով պատրաստում են այժմ նրան մեղվապահական արհեստանոցները։

Սմենից ավելի գործնական և ամենից ավելի նորատակահարաբեր պետք ե համարել ե. Պ. Արխիպենկոյի լամպը. իրրե մի գործիք, վորով կարելի յե ծուխ տալ փեթակները*):

Նա բաղկացած ե հետեւյալ մասերից, — գլանից (Ա), պղնձյա կաթսայից (Բ), և սպիրտի լամպից (Վ)։ Կաթսայի վերին մասի մեջ հազցնում են մի պղնձյա բաժան (Ղ), վոր իր տակից ծակութին ունի գոլորշին անցկացնելու համար։ Բաժակն ամուր ծածկվում և պտուտակավոր խուփով (Դ), վորի վրա պղնձյացած և մի կարճ խողովակ (Ե), որա հետ միացնում են մի այլ ուետինի խողովակ (Շ), վորի ծայրին հազցնում են ցնցուղանման կոթ՝ (Ց) բոլորակ կամ յերկայնաձեւ։

Այդ լամպը գործ են ածում հետեւյալ կերպով։ Փոքրիկ լամպի մեջ ածում են սպիրտ, իսկ կաթսայի մեջ 20 տոկոս փորմալինի լուծվածք։ Այն գեղքում, յերբ ծուխ տալու գործողությունը կատարվում և փորմալինի բլթակներով, բաժակի մեջ դրվում է բլթակն, իսկ կաթսայի մեջ ածում և մաքուր ջուր։ Ապա վառում են սպիրտի լամպը. գոլորշիների արձակումն սկսվում և մի քանի բոլովելից հետո։ Ե. Պ. Արխիպենկոյի լամպում ուղղված են այն բոլոր պահասությունները, վորոնք ցույց տրվեցին Ստուդիոսկու և Բալլասովի գործիքներում։

ՓՈՐՄԱԼԻՆԻ ՇՈԳԻՈՎ ՇՈՒԽ ՏԱԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Փատախով հիմանդ ընտանիքներն ծուխ տալը կատարվում է հետեւյալ յեղանակով։ Յերեկոյան գեմ, յերբ բոլոր մեղուները տուն են ժողովել, պատրաստում են փորմալինի լամպը կամ ինքնայերը։

* Շատաթություն։ Արխիպենկոյի սխտեմի լամպերը, վորոնք պատրաստվում են Վ. յատկայում, բավարար չեն։ Շատ լավ լամպեր կարելի յե բերել թիֆլուսի մեղվապահական պահեստներից։ Նա մատավարակես 4 ոռութ արժե։

Հենց վոր խողովակից սկսին դուրս դալ փորմալինի շոգիները՝ խողովակը մացնում են արկանոցի մեջ։ Հիմանդ ընտանիքն ծուխ տալը պետք ե տես 15—20 վայրկյան յուրաքանչյուր որ՝ 21 որվա ընթացքում։ Ծուխ տալ արկանոցից մշտապես հարմար չե լինում, վորովիներև նրա մոտ հաճախ շատ մեղուներ են հավաքվում, վորոնց անզգուշաբար կարելի յե այրել տաք գոլորշիով։ Այդ բանից խուսափելու համար չպետք ե լամպի խողովակը միանգամից խորը մացնել արկանոցի մեջ, այլ նախապես պետք ե ներս թողնել մեկշերկու բուլա գոլորշի և ապա, յերբ մեղուները կը բաշվեն բնի խորքը, կարելի յե սկսել լիակատար չափով ծուխ տալ նրանց։ Այնտեղ՝ ուր փեթակները չունեն հանովի հատակներ, և այն մեղվանցներում, ուր փատախով վարակված են շատ ընտանիքներ, ամենից լավ ե փեթակների հետին պատերի մեջ տեղում անցքեր բանալ և այդ անցքերից կատարել ծուխ տաքու գործողությունը։ Բժշկությունը վերջացնելուց հետո անցքերը փակում են խցանով։

ՓԵԹԱԿՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՈՒՄԸ

(Գեղինճեկցիա)

Փատարել փեթակների ախտահանումը, վորոնց մեջ յեղել են փատախով հիմանդ ընտանիքներ, պետք ե կատարել մեծ ինսամբով, ապա թե վոչ ամենաառողջ ընտանիքներին անգամ, յերբ տեղափորվում են այլպիսի ընտանիքների մեջ, փարակվում են փատախով։ Փեթակը լավ ախտահանելու համար՝ ամենից առաջ հարկավոր ե նրան լավ մաքրել ակնամումից և լիանալ տաք մոխրաչըրավ։ Յերբ փեթակը չորանա, նրա ներսի պատերը թրջում են սպիրտով և սպիրտը վառում. այսպիսով փեթակը ներսի կողմից խանձում են։ Սրանից հետո փեթակն ամուր-ամուր սրբում են շորի կտորով, վոր պետք ե թրջված լինի փորմալինի 10 տոկոս լուծվածքի մեջ։ Նույնը պետք ե կատարել փեթակի կտուրի վերաբերմամբ։ Փեթակը, փորմալինի թույլ լուծվածքով լիանալուց հետո, ամուր ծածկում են կտուրով և արկանոցից առատ ծուխ տալիս փորմալինի գոլորշիով. ապա արկանոցը փակվում և և փեթակը մի որ թողնում են ծածկված։ Հետեւյալ որը ծուխ տալը կրկնում են, իսկ յերբորդ որը փեթակը բաց են անում և զնում արել տակ։ Լավ կը լինի, յեթե փեթակը ախտահանելու գործողությունը կատարվի դուրս, վորովիներ փորմալինի շոգին, թեկ-

բոլորովին անվնաս ե մեղուների համար, սակայն խիստ ներգործում ե մարդու և ընտանի կենդանիների աչքի, քթի և կոկորդի լորձնային թաղանթի վրա: Ախտահաննել հին, փտած կոճղ—փեթակները շատ դժվար ե, ուստի և լով ե այրել նրանց. պետք ե այրել նաև ծածկույթ—քաթանը, բարձը և այն շրջանակները, վորոնց մեջ յեղել են միուած ձագերով հազեր:

Սյս տեղը, ուր գրված են յեղել վարակված փեթակները՝
պետք և պահել և ցանել վրան, ամենից լավը ե, սուլեմայի հա-
զեցը ած լուծվածք։ Սա շատ եժանազին միջոց ե, սակայն մատ-
չելի չե բոլոր մեղվապահներին, փորովհետև սուլեման չափազանց
խիստ ներգործող թույն ե և արվում ե զեղատներում բժշկի դե-
ղատումով միայն։ Ծայրահեղ դեպքում սուլեմայի փոխարեն կա-
րելի յե փեթակի տեղոն ախտահանել Փորմալինի 10 տոկոս լուծ-
վածքով կամ հանգցրած կրով։ Տեղն ախտահանելու ժամանակ
պետք ե խուսափել շմաբրած կարրոյցան թթվուտ գործ ածելուց,
թեպետ և այս նպատակով շատերը խորհուրդ են տալիս։

Այդ թթվուտի հասոր շատ անախորժ և մեղուների համար

ՓՏԱՆՏԻ ՄԱՐԿՈՎԵԱՆԱՐ, ՀԵՏԱԳՈՒԹՅՈՒԹՅՈՒՆԸ

Վորքան և վտախտի արտաքին նշանները բնորոշ են, այսուամենայնիվ նույն իսկ հմուտ մեղվապահները, վորոնք քաջ ծառոթ են այդ հիվանդության հետ, հաճախ ստիպված են լինում հարցը վերջնականապես վճռելու համար,— այսինքն թե նեխման վոր տեսակն ե յերևացել մեղվանոցում,— դիմել մանրադիտական հետազոտության Մանրադիտակն ուղղակի անհրաժեշտ և այն դեպքերում, յերբ հետազոտողը հնարավորություն չունի անձամբ տեսնելու հիվանդ ընտանիքները և պետք ե ոգտվի լավագույն դեսպում հեռափոր վայրերից ուղարկված և ճանապարհին մի քանի որ մընացած հացի փոքրիկ կտորներից, վորոնց մեջ մեռած վորդեր կան: Շատ անգամ մեղվապահներն ուղարկում են նեխման զանգվածը կամ այն հատիկները, վորոնք հավաքված են փեթակների հատակներից կամ առաջնատախտակների վրայից: Այդ դեպքերում առանց մանրադիտակի չեն կարելի գործ կատարել:

Φιτσικατζής ήταν αρχηγός της επανάστασης στην Ελλάδα και πολιτικός της Ελληνικής Δημοκρατίας.

Ների մանրադիտական հետազոտությունը, վոր տեղի ե ունենում
շերամապահական բոլոր ըրջաններում, ի միջի վորոնց, և կովկասում:
Շատ ժամանակ ե արգեն, վոր ևս յուրաքանչյուր տարի զեկա-
վարում եմ շերամապահական դասընթացների ունկնդիրների գործ-
նական պարագմունքները: Ունկնդիրների կազմը սովորաբար լի-
նում ե շատ զանազանատեսակ: Շատ շատերը նրանցից տեսնում
են մանրադիտակն առաջին անգամ: Բայց և այնպէս վորեւ շորս-
հինգ ժամվա ընթացքում ունկնդիրների մեծամասնությունը կա-
տարելապես ընտելանում ե մանրադիտակի գործագրության և
ապա ամենքն ել շուտով սկսում են զանազանել իրարից մանրեա-
մարմինների այն չօրս տեսակները՝ վորոնք պատահում են շե-
րամի վորդի հիվանդությունները քննելիս: Մանրադիտական տեխ-
նիկան և պրեպարատների պատրաստությունը շերամապահական
կայանի ունկնդիրների համար նույնպես առանձին գժվարու-
թյուններ չեն ներկայացնում և դյուրությամբ յուրացնվում են:

Կարծում եմ, զոր մանրադիտական հետազոտության տեխնիկացին անձանոթ մեղվապահներն և մանավանդ մեղվապահության հրահանգիչները, վորոնց համար մանրադիտակ բանեցնելու գիտությունն ուղղակի անհրաժեշտություն է, այս հողվածում ողակար տեղեկություններ կը գտնեն իրանց համար:

**ՄԱՆՐԱԴԻՏԱԿԱՆ ՅԵՎ ՆՐԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԱՆԵ-
ԼԻՒՆԵՐԸ**


Փտախստի տարբական հետազոտության համար կատարելապես բավական և ունենալ Ծեցնարդի սիստեմի հասարակ մանրագիտակը, վոր բանեցնում են շերամի թիթեռների հետազոտության ժամանակը: Այս մանրագիտակը կազմված և հասարակ պատվիճականից (№ V), № 8 ա սիստեմ (որեկտիվ) և № 3 ակնապակուց (ոռկուցար). մեծացնում և մոտ 650 անգամ և արժեք ընդամենը 38 ոռուբի:

Պատվանդանը բաղկացած է հիմքից (թ), սյունյակից (կ), գլանից (ձ), առարկայական սեղանից (ի), հայելուց (օ) և լրացուցիչ մասերից:

1) Հիմքը (p) մեծավ մասամբ պայտաձև և և շինված ամուր
մետաղից:

2) Այսունյակ (կ) անշարժ և և նըստ ամբացըսած են գլանը (ձ)-
առարկայական սեղանը (ի) և հաւելին (ո):

Գլանն ամրացրած և սյունյակի վերջին յերրորդ մասին և ծառայում ե, փոքրի հետապնդութեան մասին:



Volume 12

Ներքեւ կողմից սեղանին ամրացրած և դիավրագմա (Ա). Սա
մի բոլորակ, շարժական մետաղաթերթ է, վոր իր մհջ ունի նույն-
պես բոլորակ անցքեր՝ զանազան տրամադթերով։ Այս անցքերը
և առանցքը դասավորված են այսպես, վոր մետաղաթերթը պը-
տույտ դալիս՝ անցքերի կենտրոններն աստիճանաբար համապա-
տական դիրք են ընդունում առարկայական սեղանի անցքի վե-
րաբերմամբ և այս իսկ պատճառով՝ ընտրելով մեկ կամ մյուս
անցքը՝ կարելի յե նրա միջոցով լույսի ավելի կամ պակաս քա-
ռակություն ձգել դիտելի առարկայի վրա։

Հայելին ամրացրած և սեղանի տակ, դիաքուազմայից ներ-

քեւ, և ժառայում ե վորպիս միջոց, նրանից անդրագարձված լույսի ճառագայթներն ուղղելու դիտելի առարկայի վրա:

3) Լըացուցիչ մասինք: Այտնյակի վերին մասի վրա զետեղված է, այսպիս անվանված, միլլորմետրիական պտուտակը: (մ): Նա ծառայում է մանրադիտակի խողովակը վերուժայր շարժելու՝ անհնան տարածության վրա: Յերբ պտուտակն ամրացնում էն (պտույտ զեպի աջ, ժամացույցի ոլտքի շարժման ուղղությամբ), նա ձնշումն է գործում լծակի վրա, վոր և աստիճանաբար ցած է իջնում, իսկ նրա հետ միասին ցած է իջնում նաև գլանը՝ մանրադիտակի խողովակի հետ միասին:

Պառուտակը հակառակ կողմը շարժելիս՝ լծակը վեր և բարձրանում և նրա հետ միասին բարձրանում և նաև գլանը մանրադիտակի խողովակի հետ:

Մանրագիտակի խողովակը բաղկացած է յերկու գլանաձև փոքրիկ խողովակներից, վորոնցից մեկը հազրած և մյուսի մեջ՝ վերին խողովակի (Յ) տրամագիծն ավելի փոքր է, քան ստորին խողովակինը (Ե) և առաջինը պտուտակաձև հանվածքի միջոցով անց և կացվում յերկրորդի մեջ. Արտաքուստ պտուտակաձև հանվածքի վրա կա բոլորակ, բավականաշափ լայն և գուրս ընկած ողակ (Ը), վոր խողովակը վայր իջեցնելիս՝ դեմ և առնում գլանի վերին շրթունքին և թույլ չե տալիս խողովակին վորոշ սահմանեց ամենի ուստի.

Խողովակի ստորին մասը, վոր անց և կացվում գլունի մեջ,
նույնպես գլանաձև և և միաշափ տրամագիծ ունի իր ամբողջ տա-
րածության վրա, բացառությամբ ստորին մասի ուր, նա հան-
կարծ նեղանում և և ուր, իր ծայրին ունի պտուտակաձև հան-
վածք, այսպես անվանած, որեկտիֆիզ՝ ամրագնելու համար:

Մանրադիտակի խողովակը վերից փակվում է տափակ—
ուսուցիկ ապակիների սիստեմով—ոկույյարով (ա):

Ակույարը մի պլանաձև փոքրիկ խողովակ ե, վոր վերեկց մտցվում ե մանրագիտակի խողովակի մեջ և պահվում ե իր ահշում շնորհիվ այն ուռուցիկ ողակին, վոր կա նրա վերին մասում:

Որեկտիվը բաղկացած է մի քանի, իրանց կողերով իրար
մեջ հագրած, տափակ—ուսուցիչի ապակիների սիստեմից, վորոնք
շատ քիչ առածությամբ հեռու են իրարից և վորոնց ուսուցիչի
մակերեսութը, հակառակ ոկուլյարի ապակիների դիրքին, ուղղղ-
ված և զեղպի վեր:

ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՅԵՎ ՀՈԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՄԱՍԻՆ

Մանրադիտակը, վորպես թանկագին գործիք, պահանջում է խնամանող պահպանություն և վորոշ զգուշություն բանացնելու ժամանակի նա պետք է պահպանվի, վորքան կարելի յե մարտու ապա պետք է պաշտպանված լինի փոշուց, ժանդից և հարվածներից: Այս նպատակով, աշխատանքն սկսելուց առաջ, ինչպես և վերջացնելուց հետո, պետք է սրբել նրա բոլոր արտաքին մասերը, բացի ապակիներից, փափուկ շորի կտորով. իսկ ապակիները լավ ե սրբել փափուկ (զամշով) կամ մաքուր, փափուկ շորով: Ամենաեն խորհուրդ չենք տալիս հանել իրար մի- մից որեկտիվի բաղկացուցիչ մասերը: Թույլ տալ կարելի յե այդ բանը միայն ծայրահեղ դեպքերում, յերբ, ցնցվելուց թափվել և ընկել են որեկտիվի մեջ այն ներկի կտորները, վորով ծածկված և մանրադիտակի խողովակի ներքին մակերեսութը: Զգետք ե բանդել ու հանել նաև ոկուլյարը:

Որական աշխատանքից հետո մանրադիտակը պետք է դնել արկդի մեջ:

Աշխատանքի ժամանակ առանձնապես պետք է խուսափել որեկտիվի ստորին ապակին կեղատառվելուց. իսկ յեթե այդ բանը պատահեց, պետք է իսկույն, բանի գեռ կեղաք չի չորացել, զգուշությամբ մաքրել ապակին չոր շորով կամ յեղջերվամորթով (զամշով):

Յեթե որեկտիվի ստորին ապակին կեղատառվել և կանագական բարձամից, պետք է շորը թրջել բենզինի մեջ և նրանով սրբել կեղաքը:

Մանրադիտակի պտուտակը և խողովակն անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ յուղել վոսկրային յուղով:

Յեթե մենք նախազգուշություններ բանեցնեք՝ մանրադիտակը յերկար ժամանակ կը ծառայե առանց փաստելու և կը պահպանե իր գեղեցիկ տեսքը:

Ուրիշ պատկանելիքներից անհրաժեշտ են՝ պրեպարատներ պատրաստելու յերկու ասեղ (նկար 13), յերկու հատ և (նկար 14), ունկելիք, կտրիչ, սպիրտի փոքրիկ լամպա, քիչ քանակությամբ փորձանյութեր (բեկտիֆլուեր): Այս բոլոր առարկաները կարելի յե դնել ոպտիկայի կրպակներում կամ գեղապահեստներում:

ԹԱՐՄ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Թարմ պրեպարատներ ասելով հասկացվում են այնպիսիներ, վորոնք ստացվում են անմիջապես վորդի նեխված զանգվածից՝ առանց յենթարկելու նրան զանազան հականերգործող բաղդրությունների՝ բեկտիֆլուերի ազդեցության: Այս տեսակ պրեպարատները թափանցիկ են և պահում են իրանց մեջ շատ մանրամասնություններ, վորոնք հաճախ ավելի պարզ տեսանելի յեն, քան արհեստական կերպով մշակված պրեպարատներում:

Թարմ որեկտիվները փոքր ինչ տարրեր են իրարից՝ նայելով այն հանգամանքին՝ հեղուկ են աշուղուր նրանք, թե շատ կամ քիչ չափով կարծր մարմին: Հեղուկի հետազոտությունը կարող ե յերկու տեսակ (ինել՝ 1) կենդանի կամ նոր մեռած վորդից, վոր գեր և մուգ գույն չե ստացել և իր մեջ պարունակում և համեմատաբար քիչ քանակությամբ մանրեամաբմիններ և 2) մուգ գույնի նեխված զանգվածից, վոր մեծ քանակությամբ մանրեամաբմիններ ունի իր մեջ:

Հեղուկների յերկու առաջին տեսակի հետազոտության ժամանակ՝ նրանց վրա քիչ քանակությամբ ջուր են ավելացնում՝ առաջին գեղուրում ավելի քիչ, յերկրորդ գեղուրում՝ ավելի շատ:


Թարմ պրեպարատի պատրաստությունը կատարվում է հետեւյալ կերպով: Մաքուր, սրբած առարկայական ապակու վրա՝ լուսնոսկյա տուղի միջոցով, վորի ծայրն ողականման վոլորված և, կամ ապակյա ձողիկով և կամ կտրիչի (սկալպել) ձայրով՝ քննվող հեղուկից յերկու փորբիկ կաթիլ են դնում և նրանց վրա ավելացնում մի կաթիլ յեռացրած և զտած ջուր: Հեղուկները լավ խառնում են իրար հետ լուսնոսկյա ողակով: Յերբ հեղուկն այս ձևով պատրաստած և, վերցնում են ուրիշ, նույնպես մաքուր սրբած, առարկայական ապակի, վորի վրա և դնում են վերեւում հիշված գործիքներից մեկն ու մեկի միջոցով հետազոտվող հեղուկից մի փորբիկ կաթիլ և զգուշությամբ ծածկում նրան ապակյա ծածկույթով՝ աշխատելով միենալոյն ժամանակ, վոր ապակու տակ ողի բշտիկները չմտնեն: Մած-

նկար 14.

թյամբ ծածկում նրան ապակյա ծածկույթով՝ ապակու գործիքներից մերժական ապակի, վոր ապակու տակ ողի բշտիկները չմտնեն: Մած-

կող և առարկայական ապակիների մեջ տեղում հեղուկի շերտը պետք և հաստ չլինի, վորովհետև այդպիսի շերտի մեջ դժվար է լինում դիտել պրեպարատի պարունակությունը։ Բացի սրանից՝ յերբ հեղուկի շերտը հաստ է, ծածկող ապակին շարժվում և տեղից և իրան հետ շարժում նաև քննվող հեղուկը, մի հանգամանք, վոր խանգարում և հետազոտությանը։

Հեղուկի ավելորդ մասը պետք և հեռացնվի ծծող թղթի միջոցով։ Յեթե քննվող հեղուկի կաթիլը շատ փոքր է, այդ դեպքում ծածկող ապակին դնելիս՝ նրա տակ շատ ող և մնում, վոր պրեպարատի մեջ կազմում և բազմաթիվ ոդային բշտիկներ, իսկ այս բշտիկները բոլորովին անպետք են դարձնում պրեպարատը հետազոտության համար։ Յեթե պատրաստված թարմ պրեպարատն ուզում են դիտել յերկար ժամանակ, այդ դեպքում պետք



Նկար 15

Առարկայական ապակի հետազոտելու համար «կախված կաթիլի մեջ»

և պաշտպանել նրան չորանալուց՝ ծածկելով կափարիչ - ապակին մոմի կամ վագելինի շերտով։

Սյալպիսի յերկարատև դիտողությունների համար շուկայում կան առանձին առարկայական ապակիներ, վորոնք իրենց մեջտեղում ունին հղկված գողավորություններ։

Հետազոտության այս յեղանակը հայտնի յէ «հետազոտություն կախված կաթիլի մեջ» անունով։

Կափարիչ - ապակու վրա դրվում և հեղուկի մի փոքրիկ կաթիլ վորի մեջ կան միջրորներ։ Հետո ապակին արագությամբ շուռ և տրվում կաթիլի հետ միասին և դրվում և առարկայական ապակու վրա, վորի մեջ գողավորություն կայ, բայց դրվում և այնպես, վոր կաթիլն ուղղի մտնի գողավորության մեջ և աղատ կերպով կախ ընկնի կափարիչ - ապակուց։ Գողավորության շուրջերը նախապես ոծում են վագելինով և կափարիչ - ապակին հուպ տալիս նրա վրա։

Սկզբում անվարժ դիտողները հաճախ դժվարանում են մանրադիտակի սիստեմը կանոնավոր կերպով հարմարեցնելու և յերրեմն

ասստեղ մնշում են ապակին նրանով։ Այդ բանից խույս տալու համար նախապես պետք և ձեռքով այնպիս վայր թողնել մանրադիտակի խողովակը, վոր նրա օրենտիվը համարյա շոշափե պրեպարատի կափարիչ - ապակին և ապա, մանրադիտակի մեջ նայելով, իջեցնել եամ բարձրացնել նրա խողովակը մանրաչափական պատուակի միջոցով, մինչև վոր պրեպարատի պարունակության խափար մասերը պարզվեն, սրանից հետո արդեն դժվար չե կանոնավորել մանրադիտակի ֆոկուսը։

Վորդի կարծր և չոր պարունակության հետազոտությունը կատարվում և փատխատի չորացած կեղել բջիջների կողմանակի պատերից քերել - հանելուց հետո։ Այդ զանգվածի փոքրիկ հատիկները խնամքով տրորվում են կաթիչի կամ ապակյա ձողիկի միջոցով առարկայական ապակու վրա յերկու կաթիլ գտած ջրի կամ, այսպիս անվանված, ֆիզիոլոգիական հեղուկի հետ միասին, վոր սովորական աղի բաղադրություն և ($0,6\%$)։ Այս հեղուկից պատրաստում են պրեպարատներ նույն ձևով, ինչպես ցույց արվեց վերելում հեղուկ - պրեպարատների պատրաստությունը բացարելիս։

Թարմ և աններկ պրեպարատների հետազոտությունը կատարվում և մանրադիտակի նեղ դիմաքրագմայի միջոցով։

ԲԱՑԻԼԼԵՐԻ ՄՆԱՅՈՒՆԵՐԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ԳՈՒՆԱՎՈՐՈՒՄՆ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ:

Թարմ պրեպարատը հետազոտելուց հետո՝ սովորաբար ձեռնամուխ են լինում մշակելու նրան ներկերով։ Պրեպարատի ներկումը կամ գունափորումը պարտավորական է, յերբ հետազոտվում և «թթու վորդը», վորովհետև թարմ, չներկված պրեպարատի մեջ միշտ չե հաջողվում յերեան հանել նեխված զանգվածի բակտերիաները։ Բակտերիաները տարբերվում են զանազան տեսակներ, արտաքին տեսքով նրանց նման, կազմվածներից, ինչպես որինակ՝ ճարպի կաթիլներից, աղերից և մինակային գործվածքի քայլայված մասնիկներից այն բանով, վոր նրանք (բակտերիաները) ազահարար ծծում և շատ ավելի յերկար են պահում իրենց մեջ անիլինի հիմնական ներկերը, բայց բոլոր նրանց նման կազմվածները։

Բայց վորովհետև կենդանի բակտերիաները չեն ներկվում

այդ ներկերով¹⁾), ուստի և նրանք նախապես պետք եւ սպանվին և ամբացնվին կափարիչ—ապակու վրա, վորպեսզի գույն տալու ժամանակ՝ ներկի նյութերը չորքեն—տանեն նրանց: Թե առաջին և թե յերկրորդ նպատակին համելու համար կան շատ յեղանակներ: Ամենատարածվածը և մեր նպատակին ամենից ավելի համապատասխանը հեղուկներ չորացնելու այն յեղանակն ե, վոր առաջին անգամ առաջարկել ե Ծ. Կոխը և կատարելագործել ենրիլիս: Այդ յեղանակը հետեւյալն ե: Հետազոտվող հեղուկը լուսակու ողակի կամ ապակյա ձողիկի միջոցով, վորքան կարելի յի բարակ, հավասարաչափ շերտի նման քսվում ե կափարիչ—ապարակ, հավասարաչափ շերտի նման քսվուր չափով կախված ե մշակման կուն և այս հանգամանքից նշանավոր չափով կախված ե մշակման հետագա հաջողությունը: Վորպեսզի հետազոտվող հեղուկի շերտը հավասարաչափ քսվի, կափարիչ—ապակինները պետք ե շատ լավ սրբել:

Այդ նպատակով լավ ե սուղել նրանց կալիի (Kalicaustic) 20% լուծվածքի մեջ և ապա սրբել մաքուր շորով, վոր պետք ե թթված լինի ալկոհոլով: Ապակինների վրայ սովորաբար կպած են լինում յուղային մասնիկներ և յիթե նրանք չհետացնվին սպիրտով, կարող են բավկալանաչափ դժվարացնել հեղուկը բարակ շերտի նման քսելու գործը: Յերբ հեղուկն արդեն քսված ե, ապա կինները թողնում են դուրս, բաց ողի մեջ, վորպեսզի հեղուկը չորանա. միայն այս դեպքում, նրան փոշուց պաշտպանելու համար ծածկում են ապակյա խուփով: Յերբ հեղուկը փոքր ինչ չորացել ե, վերցնում են կափարիչ—ապակին կորնեյի ունելիքի միջոցով այնպես, վոր ապակու մակերեսույթը, ուր գտնվում է հետազոտվող հեղուկը, ուղղված լինի գեղի վեր և այս վերը դանդաղությամբ 2—3 անգամ անց են կացնում սպիրտի լամպայի բոցի միջից: Այս ձևի մշտկումը համարյա չե փոխվում բակարիսների արտաքին տեսքը, չե զրկում նրանց անիլինի ներկերով գունավորվելու ընդունակությունից, պնդացնում ե նրանց ապակու վրա և լիովին մակարդելով հեղուկի մեջ լուծված սպիտակուցանյութերը, թույլ չե տալիս ներկեր ընդունելու իրանց մեջ: Մասնեամբ մինները բացի ջերմության բարձր աստիճանով պընդացնելուց կարելի յելավ հետեւանքներ ստանալ նաև հետեւյալ յելավնակով,—սուղել ապակին՝ դուրս չորացած հետազոտուղ հեղու-

¹⁾ Մանոթություն, Բառումզարտենը հաստատապես պատմում է վոր կենդանի բակարիսներին ել բնդունակ են ներկվելու:

կի հետ միասին՝ կես բոսկեյով արսովուա ալկոհոլի կամ ալկոհոլի և յեթերի հավասարաչափ խառնուրդի մեջ:



Նկար 16.

Կորնեյի ունելիքը

Փտախտի և թթու վորդի բակտերիանները ներկելու համար կափարիչ—ապակինների վրա՝ գործ են ածում անիլինի հիմնական ներկերի ջրային լուծվածքները, վոր անհրաժեշտ և պատրաստել անձամբ:

Սրանցից ամենագործածականները և մեր նպատակի համար պիտանինները հետեւյալներն են, — 1) ֆուկուին — Fuxin 2 gr., ալկոհոլ 15 gr. ջուր 85 gr. և 2) մետիլենի լեղակ — Wethylen blau 2 gr. ալկոհոլ 15 gr., ջուր 85 gr.:

Յերկու լուծվածքն ել պատրաստելուց հետո՝ դուրս են սովորական թղթյա զտիչի միջոցով, վոր շիճվում ե սպիտակ ծծող թղթից:

Հիշված յերկու լուծվածքն ել հավասարապես լավ են ներկում պլազմարատները. տարբերությունը նրանց մեջ այն ե, վոր ֆուկուինի ներկն ամենից ավելի դիմացկուն ե, իսկ մետիլենի լեղակն այն առավելությունն ունի, վոր չե ներկում պրեպարատն ավելի քան պետք ե, վորքան ել յերկար տևե նրա ներգործությունը: Պրեպարատի ֆոնը մնում ե համարյա անգույն, իսկ բակտերիանները լավ ներկվում են:

Ներկման գործողությունը կարելի յե կատարել հետեւյալ յերկու յեղանակով:

1) Կափարիչ—ապակու վրա՝ ուր գտնվում ե վերեւում հիշված յեղանակով պատրաստված նեխման զանգվածի չոր ու պընդացած պարունակությունը, ապակյա ձողիկի միջոցով դրվում ե մի մեծ կաթիլ թե մեկ և թե մյուս ներկող հեղուկից, ապա ունելիքով բռնելով կափարիչ—ապակին՝ 2—3 անգամ անց են կացնում նրան սպիրտի լամպայի բոցի մեջ ու չորացնում ծծող թղթի միջոցով հուպատակով նրան յերկու թերթի արանքում:

2) Յերկրորդ յեղանակը թեև ավելի ժամանակ և պահանջում իր պատրաստության համար, սակայն նրա միջոցով ավելի մաքուր պրեպարատներ են ստացվում: Կափարիչ—ապակին գդուշությամբ բաց են թողնում լողալու ժամացույցի ապակու մեջ ածած ներկի մեջ այսպիսի գիրքով, վոր քսված մակերեսույթը տակի կողմը լինի: 20—25 րոպեյցից հետո—իսկ ֆուլսինի մեջ նույն իսկ մի ժամից հետո,—մետիլենի լիզակում փոտախտի բակտերիաները ներկում են բավարար շափով, յեթե ներկը ժամացույցի ապակու մեջ տաքացրած լինի: Ապա ներկը լվացվում և ջրով և ապակին չորացնվում, ինչպես առաջին դեպքում: Ներկված բակտերիաների գիտողությունը պետք է կատարվի ամենից առաջ ջրի ոգնությամբ. նրանց ձեր և աեսքն ամենից լավ նկատելի յեն այդ միջավայրում: Սրա համար ներկած և ծծող թղթի միջոցով չորացրած ապակին դնում են մի կաթիլ ջրի վրա, վոր ածած և առարկայական ապակուն և հետո սկսում են նայել մանրադիտակով:

Յեթե պրեպարատը հետաքրքրական և և լավ ներկված այդ դեպքում նրան պետք է պատրաստել պահելու համար:

Այս նպատակով կափարիչ—ապակին կամ պահվում և ծծույթի տակ մինչև վոր բուրովին չորանա և կամ դրվում և ծծող թերթերի մեջ տեղում: Յերբ պրեպարատը կատարելապես կը չորանա, առարկայական ապակու վրա ածում են մի կաթիլ կանազայի բալզամ և զգուշությամբ, աշխատելով վոր այնտեղ և մտնեն ոգի բշտիկներ, կափարիչ—ապակին շուռ են տալիս նրա վրա՝ ներկված յերեսի կողմով: Այս յեղանակով պատրաստված պրեպարատները միայն աննշան փոփոխություն են ցույց տալիս, յեթե համեմատելու լինենք նրանց՝ ջրայինների հետ—բացիլները նրանց մեջ փոքր ինչ բարակ են յերեսում:

ՓՏԱԽՏԻ ՍԱՂՄԻԿՆԵՐԻ ՆԵՐԿԵԼԸ ՅԵՎ ՆՐԱՆՑԻՑ ՊՐԵ- ՊԱՐԱՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Այն պրեպարատները հետազոտելիս, վորոնք պատրաստված են նեխված մուգ գույնի զանգվածից կամ չոր կեղեններից, սովորաբ նրանց մեջ տեսնիում են միայն բացիլների սաղմիկներ, և սրանք հեշտությամբ նկատելի յեն լինում ճառազայթների այն զորեղ բեկմամբ, վոր կատարվում է փայլուն ձվածեւ հատիկների մեջ: Չորացրած կափարիչ—ապակիններից պատրաստված պրեպա-

րատների վրա փոտախտի բացիլների սաղմիկները չեն ներկվում, յեթե ներկումը տեղի յեւ ունենում մեր վերեւում նկարագրած՝ յեղանակով: Այդպիսի պրեպարատներում նրանք յերեսում են լուսավոր գատարկությունների ձևով՝ ցըգած պրեպարատի ներկված զանգվածի մեջ: Յեթե կափարիչ—ապակին տաքացրած և յերկար ժամանակ, յեթե 2-3 անգամվա փոխարեն ապակին անցկացնենք բոցի միջով 10 անգամ, բացիլները կը կորցնեն ներկվելու ընդունակությունը, այն ինչ սաղմիկներն, ընդհակառակը, ձեռք կը բերեն այդ ընդունակությունը: Բոլոր բակտերիաների սաղմերը պատկանում են այն մարմինների կարգին, վորոնք մեծ դժվարությամբ են ներկվում: Փոտախտի սաղմիկներն այդ բանում բացառությունն են ներկվում և համեմատարար պետք հեշտությամբ են ներկվում: Դժվարցւթյամբ ներկվող սաղմիկները դժվարությամբ ել կորցնում են իրանց գույնը, յերբ պրեպարատները յենթարկվում են զանազան բեակտիվների ներգործության՝ նրանց գույնազերը անելու նպատակով: Սաղմիկները ներկելու լավագույն յեղանակը հետևյալն է.—ապակին իր վրա քսած սաղմերով՝ յերեք անգամ՝ անց և կացվում սպիրտի լամափ բոցի միջով և դըրվում և առանձին պատրաստած ներկի մեջ, վոր էոչվում և ցիւնելունյան լուծվածք կամ կարբովան փուկսին: Այս լուծվածքը պատրաստվում և հետեւյալ կերպով:

5 ցւ 5% կարբովան թթվուտ. 100 ցւ, ջուր, 1 ցւ. Փուկսին: Ֆուկսինը վազորոր լուծվում և ալկոհոլի մեջ, վորից պետք և վերցնել 15 ցւ:

Այդ ներկն ածում են ժամացույցի ապակու մեջ, բաց են թողնում նրա մեջ կափարիչ—ապակին լողալու և զգուշությամբ ժամացույցի ապակին տաքացնում են սպիրտի լամափ վրա, մինչև վոր հեղուկն սկսե յեփ գալ: Տաքացնելը տեսում և մոտ 5 րոպե: այդ գործողությունը պետք է կատարվի դանդաղ և զգուշությամբ: Զը պիտի թույլ տալ, վոր հեղուկն սկսե սպատորվիլ և յերեսին փառ կապե, այդ գեղպատ պետք և մի քանի կաթիլ ալկոհոլ ավելացնել վրան: Յերբ կափարիչ—ապակին արդեն ներկված և, ունեւերով վերցնում են նրան և 10 վայրկյանի չափ սուլպում 2½% ծծմբային թթվուտի մեջ, վոր հետո արագությամբ լվանում են ապակու վրայից ջրով: Յեթե պրեպարատը հաջող և պատրաստված, սաղմերը նրա վրա յերեսում են ալ-կարմիր հատիկների ձևով, իսկ պրեպարատի միուս մասերը—անգույն: Այսպիսի պրե-

պարատները լավ և ներկել և մի ուրիշ գույնով, վոր տարրեր լինի սաղմերի գույնից: Մրա համար կափարիչ—ապակին սուզում են մի ըռաբերով մետիլինի լեղակի լուծվածքի մեջ, հետո ապակին լվանում ջրով, չորացնում և զետեղում կանագական բալզամի մեջ:

Այսպիսի պրեպարատներում ստացվում երկնակի՝ չափազանց գեղեցիկ՝ գունավորումն. բակտերիաները, յեթե նրանք կան, ներկվում են կապույտ գույնով, իսկ սաղմերը կարմիր գույնով:

Սաղմերը կարելի յեն ներկել նաև անմիջապես կափարիչ—ապակու վրա, ուր նրանք բաված են, չորացած և ամրացրած: Այս նպատակով կափարիչ—ապակու վրա ածվում են մի կաթիլ կարբույան ֆուկուն. պրեպարատը տաքացնվում է այնքան, մինչեւ վոր ներկն ուկսե յեփ գալ և ապա մշակվում է այնպես, ինչպես ցույց տրվեց վերեռում:

ՍՊԻՐՈԽԵՏԱՆՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՒՆԱՎՈՐՈՒՄԸ

Ինչպես վերեռում ցույց տրվեց, կնքված վորդի փտախտը հետազոտելիս, փտախտային ձգվող զանգվածում Մասսանը գտավ առանձին բնորոշ մարմիններ, վորոնք, նրա կարծիքով, B. larvæ—ի իրար կազած հյուսվածքների գնդիկներ են: Յերբ սաղմերը ներկվում են սովորական յեղանակով, այդ հյուսվածքները չեն հաջողվում յերեան հանել: Նրանց ներկելու համար Մասսանն առաջարկեց հետեւյալ յեղանակը:

Մաքուր կափարիչ—ապակու վրա լուսնոսկյա ողակի միջոցով, իբրև հավասարաչափ շերտ, քսվում են ջրի մեջ լուծված փտախտային զանգվածը: Յերբ քսվածը բոլորովին կը չորանա, ապակին տեղափորում են $8^{\circ}/_0$ ֆորմալինով լի (1 մաս ֆորմալին և 4 մաս ջուր) տաշտակի մեջ, ուր պրեպարատը մնում է $1/2$ ժամ: Հետո ապակին մի քանի անգամ լվացվում և արսովուա սպիրուով և չորացնելուց հետո ներկվում են 24 ժամվա ընթացքում սենյակի ջերմության մեջ կամ 4 ժամ Ciemsa— Բոմանովսկու լուծվածքում C. 45° ջերմության մեջ*):

Ներկելն այս լուծվածքով կատարվում է հետեւյալ կերպով: Մաքուր ապակյա խողովակի մեջ ածվում են 10 խորանարդ սանտիմետր ջուր, վոր տաքացնվում են մինչև C-ի $30-40^{\circ}$: Այս ջրի մեջ ածում են 10 կաթիլ հիշված ներկից: Լուծվածքը թափահար-

*) Ciemsa-Բոմանովսկու ներկը կարելի յեն ձևոք բերել Մոոկվայում Ֆերեյնի դեղավաճառական պահեստից:

գում եւ ածվում մի թասի մեջ, ուր առաջուց դրված են ներկվելու համար նշանակված պրեպարատը: Այս լեղանակով ներկվում են վոչ միայն սպիրուխտանման մարմիններն, այլ և B. larvæ-ի սաղմերը:

ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՐՄ ՁԵՎՈՎ ՅԵՎ ԳԼԻՑԵՐԻՆՈՒՄ

B. alvei-ի և B. larvæ-ի չներկված սաղմերն այնքան բնորոշ են, վոր ցույց տալու համար հաճախ շատ ցանկալի յեն ձեռքի տակ ունենալ բոլորովին անմշակ ձևով և չդրված կանադական բալզամի մեջ, ուր նրանք անտեսանելի յեն դառնում: Վորպեսզի այս պրեպարատները ավելի դիմացկուն դարձնենք, պետք ենոր պատրաստված պրեպարատների շուրթերին քանի յերեսի լակ Masken lac, ծայրահեղ դեպքում կարելի յեն քսել և կանադական բալզամ, թեպետ և վերջինը անհարմար են նրանով, վոր յերկար չեն չորանում: Խնամքով և զգուշությամբ այս կերպ պատրաստված պրեպարատները կարելի յեն պահել մի քանի ամիս: Չներկված սաղմերի ավելի դիմացկուն պրեպարատները, վորոնք պահվում են մի քանի տարի, պետք են պատրաստված լինին գլիցերենի ոգնությամբ: Այդ գործողությունը պարզ է.—գլիցերենի մի փոքրիկ կաթիլ գրվում է առարկայական ապակու վրա, ուր դրված են նաև մի կաթիլ իրա մեջ սաղմեր պարունակող հեղուկից: յերկու կաթիլն ևս իրար հետ խառնվում են ապակյա ձողիկով և հետո պրեպարատը ծածկվում են ապակով, վորի շուրթերին քսվում են վերեռում հիշված բազդրություններից մեկն ու մեկը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՏԱԽՏԻ ՊՐԵՊԱՐԱՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՆ

Սկզբում հիշված եր, վոր փտախտի զանգվածի մանրադիտական հետազոտության ժամանակ՝ հասակավոր բացիլներ պատահում են միայն նոր մեռած վորդի մեջ, ուստի և բացիլների պրեպարատների պատրաստությունը հսարավոր են միայն այն դեպքում, յերբ ձեռքի տակ կա բոլորովին թարմ նյութ, վոր մեղվանոցում, յեթե նա սաստիկ չեն վարակված, դժվար են լինում ձարել:

Բանն այն ե, վոր կնքված վորդի մահը սովորաբար յերեան և գալիս, այն ժամանակ, յերբ բջիջների կնիքները ներս են ընկեռում. փտախտային զանգուածն այդ ժամանակ պարունակում է իր մեջ միմյայն սաղմեր: Բացիլների պրեպարատներ ավելի հեշտ և ստանալ այն փեթակներից, վորոնց մեջ փտախտից սկսել են մեռնել չծածկված վորդերը: Դեռ ևս չլուծված և նոր միայն մեռած վորդերը տալիս են գեղեցիկ նյութ այդ պրեպարատների համար:

Կտրելով հացի մի կտոր այդպիսի վորդերով, կարելի յենույն իսկ մի հատիկ վորդից պատրաստել բացիլների բազմաթիվ պրեպարատներ և բացի արանից՝ սաղմերի աստիճանական զարգացման չափազանց հետաքրքրական պրեպարատների մի ամբողջ շարան: Այս նպատակով պետք ե պատրաստել պրեպարատները վորոշ ժամանակամիջոցներից հետո 3, 6, 10 և այլն ժամից հետո, մինչև վոր բացիլները սաղմեր դառնան:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Յերես
1. Առաջարան	3
2. Ներածություն	8
3. Փտախտ	9
4. Բաց վորդի փտախտի մանրեմարմինը	11
5. Յելքովական փտախտի հավանական սկզբնապատճառը	14
6. Բաց վորդի փտախտի արտաքին նշանները	15
7. Կնքված վորդի փտախտի մանրեամարմինները	17
8. Կնքված վորդի փտախտի արտաքին նշանները	19
9. Այսպես անվանված «թթված վորդ»	23
10. «Պարկածն վորդ»	25
11. «Պարկածն վորդի» նշանները	25
12. Առողջ ընտանիքների արվեստական վարակման վորձեր «պարկածն վորդ»-ի հիվանդությամբ	26
13. «Պարկածն վորդի» արվեստական վարակման վորձեր՝ կատարված կովկասյան շերամապահական կայանում	27
14. Խառն վարակում	29
15. Մրսեցրած վորդ	30
16. Բաց վորդի փտախտի, կնքված ձագի փտախտի և պարկածն վորդի համեմատական աղյուսակը	31
17. Փտախտի հողորդումն ու տարածումը	33
18. Փտախտի բժշկությունը կոճղերի մեջ	34
19. Փտախտի բժշկությունը շրջանակավոր փեթակներում .	36
20. Փտախտի բժշկությունը փոխադրությամբ՝ ձագի վոչնչացման հետ միասին	38
21. Փտախտի բժշկությունը մըջնային թթվուտով	39
22. Պայքարը փտախտի գեմ մեծ մեղվանոցներում, ուր վարակված են բազմաթիվ ընտանիքներ	40
23. Փտախտի ընդհանրական բժշկության կազմակերպությունը մեղվագաղահական շրջաններում	45

Ցերե

24. Նախազգուշության միջոցներ փոտախտի դարձացման և տարածման դեմ	47
25. Ֆորմալինի շոգիներով մեղուներին ծուխ տալու դորձիք- ները	48
26. Ֆորմալինի շոգինով ծուխ տալու յեղանակը	50
27. Փեթակների ախտահանումը	51
28. Փոտախտի մանրազիտական հետազոտությունը	52
29. Մանրազիտակը և նրան վերաբերյալ պատկանելիքները	53
30. Մանրազիտակի պահպանությունն և հոգացողությունը նրա մասին	56
31. Թարմ պրեզարատների հետազոտությունը	57
32. Բացիլլների մնայուն պրեզարատների գունավորումն և պատրաստությունը	59
33. Փոտախտի սաղմիկների ներկելն և նրանցից պրեզարա- տներ պատրաստելը	62
34. Սպիրոխետանման մարմինների գունավորումը	64
35. Պրեզարատների պատրաստությունը թարմ ձևով և գլի- ցերինում	65
36. Ընդհանուր նկատողություններ փոտախտի պրեզարատ- ների պատրաստության վերաբերմամբ	65


ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՄԱՐՏԱԿՈՉ»

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

ԳԻՆՆ Ե

1. Կովալենկո.—Քաղաքական գրագիտություն. 25 կ.
2. Ս. Կասյան. — Հայաստանի տնտեսական - դասակարգային ստրուկտուրան. 15 կ.
3. Ալ. Մարտունի. — Հովհ. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը 15 կ.
4. Հովհ. Քաջազնունի. — Հ. Հ. Դաշնակցությունն անելիք չունի այլևս 75 կ.
5. Դեսպի Նոր կյանք—պիես
6. Կարմիր ռազմիկի հուշատեսքը.
7. Լիլինա. — Կոմմոնիստական ընտանիքից գեղի կոմ. հասարակություն 75 կ.
8. Վ. Նիկոլսկի. — Խոչպես ոգտագործել կենդանիների ազբը լավագույն կերպով 20 կ.
9. Ն. Կովագին. — Մեղուներին կերակրելը. 40 կ.
10. Մ. Փ. Իվանով. — Գյուղատնտեսական թոշունի մասցումը և գիրացումը 20 կ.
11. Վ. Խարշենկո. — Հորթերի խնամքը 15 կ.
12. Ե. Կովագին. — Շրջանակալոր փեթակի ընտրությունը. 15 կ.
13. Վ. Խողորովսկի. — Վ. Ի. Լենին. 20 կ.
14. Լ. Բ. Կամենյեվ. — Ռուսաստանի կոմմոնիստական կուսակցության պատմությունը և Վ. Ի. Լենինը. 35 կ.
15. Պ. Պ. Զվորիկին. — Բաղմանյա մանդատու խոսակերմերի կուլտուրան 25 կ.
16. Ն. Յանուշեվսկի. — Անդրկովկաստմ բամբակ մշակելու ձեռնարկ 20 կ.
17. Պ. Մ. Գեղդա. — Հողի մշակումը 25 կ.
18. Գյուղացիական խաղարկու գոխսառություն
19. Կ. Ա. Գորբաշեվ. — Մեղուների փոտախոր 30 կ.

ԳԻՆՆ Ե ՅՈԳ.



Դիմել

Издательство «Мартакен»
Тифлес, ул. Тредкого № 6.

ՀՀ Ազգային գրադարան



NL0267935

8416